

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ՀԱՅԵՍՏԱՆԻ

Adresse:

REDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՍՊԱՍՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ

Գարձեալ յուսոյ, անկալութեան օրեր... Եւրօպան ուժգին մի խլրտուժով ուզում է, կարծէք, ցոյց տալ սուլթանին, որ Հայի աստղը դեռ ևս չէ մարել: Մտքերը սթափուում են երկարատե թմրութիւնից. հանրային կարծիքը մոլորեալ յորձանք է տալիս և դիւանագիտութիւնը մեղադրեալի աթոռի վրայ դրելով՝ խօսք է առնում ինքզինքը պաշտպանելու:

Թիւրքաց գազանութիւնների արձագանքն է, որ տխուր շառաչումով անցնում է կրկին քաղաքակիրթ աշխարհի վրայից. հայկական խնդիրն է, որ մոռացութեան անդրեղից դուրս նետուելով՝ ցցւում է նորից պարլամենտական ատենանի առջև:

Այն հազարէպրոպէներից է սա, երբ անկնկալ անցքերը գալիս են վայրկենաբար լուսաւորելու թշուառ հալածականի խարխափող գիտակցութիւնը, երբ մահաւան ճիրաններում գալարւող մասսան՝ ջարդի ու անհաւասար կռիւի կրկնւում մի վայրկեան հոգի է առնում, սրտապնդւում է, լսելով հեռւից օգնութեան խուլ մրմունջներ. Կիսով չափ ամոքւում են նրա վշտերը, կազդուրւում են նրա վերքերը:

Որքա՞ն կը տւէ արդեօք այս յուսատու սպասողական դրութիւնը...

Սովորել ենք յոռետես լինել: Ընտելացել ենք դիւանագիտութեան սին ու ամուլ ծանուցումներին: Հեռու պահելնք, այնուամենայնիւ, բացարձակ սկեպտիկութիւնից: Ոչ չափազանց յոռետես, ոչ չափազանց լաւատես: Պաղտնիքով համբերութեամբ դիտենք անցքերը և սպասենք նրանց վախճանին:

Իսկ մինչ այն՝ հաճելի է մեզ արձանագրել, որ հայկական համակրութիւնները այսօր շեշտւում են Եւրօպայի բոլոր կետերում աւելի ուժգին, քան նախորդ թաւաններում: Առաջին անգամն է, որ Բերնի համաշխարհային խաղաղութեան բիւրօն այնքան կորովի դիմում է անում վեց պետութիւններին, ցոյց տալով նրանց 61-րդ յօդաձև իրագործելու անյապաղ անհրաժեշտութիւնը: Առաջին անգամն է, որ սօցիալիստական բիւրօները ընդարձակ ու մոլեգին մանիֆէստներով յորդոր են կարգում Եւրօպայի աշխատաւոր ընդհանրութեանը՝

ձայն բարձրացնել պարլամենտներում ու հրապարակական ժողովներում ինպստ հայութեան: Անգամ Աւստրիայում՝ միացեալ ու բազմացել սօցիալիստական կօնգրէսում համակրութեան ցոյց են առնում առաջկական բարբարոսութեան զոհերին:

Եւ այդ բոլոր ցոյցերի, այդ բոլոր մանիֆէստների ու ճառերի մէջ միութարական այն է, որ դրանց հեղինակները չեն ուզում բաւականա՛յն սոսկ պլատօնական համակրութեան արտայայտութիւններով, սոսկ բողոքներով՝ ընդդէմ ջարդերի ու աւերումների — ինչպէս մովոր էինք տեսնել 1895-96 թաւաններում — այլ նրանք վկայում են և փաստելով ապացուցանում, որ թաւանն ու սպանութիւնը հայ երկրի հնօրմալ, առօրեայ վիճակն է և որ հետեւապէս պէտք է դիմել անմիջական ու արմատական բարենորոգումների՝ ի կատար ածելով Բերլինի դաշնագիրը և 1895-ի մայիսեան ծրագիրը:

Հայկական պրօպագանդը հասունացել է: „Պրօ Արմէնիան“ իր եռանդուն գործունէութեամբ, իր աղետարշ նկարագրութիւններով ու արիւնկոտ փաստերի հեղեղով պատրաստել է մտքերը աւելի գործնական ու բանաւոր աշխատանքի: Ամբողջ Քրանսիան է այսօր ոտքի կանգնել հայկական խնդիրն առաջ մղելու համար: Նոյեմբերի 4-ի հարցապնդումի ընթացքում Զամբայի օրակարգին առաջնութիւն տալով՝ պատգամաւորական ժողովը և նրա հետ Քրանսիան համակրութեան մի յուզիչ ցոյց էր, որ կամեցաւ անել հայերին:

Միացել են բոլոր կուսակցութիւնները մի սրտաշարժ համերաշխութեան մէջ՝ յանուն մի լքւած, ողբերգական դատի, որի վսեմութիւնը գիտակցում են ամէնքն էլ: Հրապարակ են եկել Դիտտերնի պէս մարդիկ, որոնք հեղինակաւոր ձայնով թելադրում են կառավարութեան, որ Հայաստանի բարենորոգումները պէտք է լինեն կենտրոնական խնդիր Քրանս-Թիւրքական ընդհանրումի մէջ և հրաւիրում են մինիստր Դելկասսէին նախաձեռնող լինել միջազգային մի խորհրդաժողովի, որը վերջ դնէր հայկական դժոխքին: Քրանսիայի բարոյական հմայքին նախանձախնդիր և ռուսական ղրինակցութեան՝ մոլեռանդ հակառակորդ՝ Մեծ Յեղափոխութեան հպարտ զաւակները պարլամենտի մէջ ու լրագրական սիւնակներում թախանձագին յորդոր են կարգում կառավարութեան՝ մարբել չարաշուք Հանօտօյի ոճիրները, փրկել մի առաջագէտ, քաղաքակրթւող ժողովուրդ բարբարոսների ճանկերից և թոյլ չտալ երբէք, որ այդ ժողովուրդի

ճակատագիրը յանձնելի մի այլ Բռնակալի քմահաճութեան...

Ի՞նչ է պատասխանում պ. Գեղկաստէ: Ի՞նչ ասաց նա նոյեմբերի 4-ին ի պատասխան Գրնի Կոչէնի և Ջամբայի հարցապնդումներին: Ոչինչ, կամ գրեթէ ոչինչ: Ընդհանուր բառեր, տարտամ, երկսայրի յայտնութիւններ: Հարկադրեա՞ծ պաշտպանելու՞ նա փութաց ծանուցանել, որ ինքը ջերմապէս համակրում է հայերին և որ Ֆրանսիան դժիշտ կը բարձրացնէ իր ձայնը, որպէս զի հարցադրութիւնները դադարեն, — և նպա իսկոյն կրեց, յետ նահանջեց, յայտարարելով, որ Ֆրանսիան միակ ստորագրողը չէ Բերլինի դաշնագրի:

Սակայն, խոշոր հարցապնդումը դեռ յետոյ կը գայ և պ. Գեղկաստէ խոստացաւ արդէն աւելի հանգամանորէն պարզել իր հայեացքները հայոց հարցի մասին: Մեր բարեկամ Գիւստավ Ռուանէ պատրաստում է մի լուրջ ու ահաւոր պօստի է, որը կունենայ, անկասկած, նոյն պիսի մի շառաչում, որպիսին ունեցել են համակրելի պատգամաւորի միւս կարեւոր հարցապնդումները:

Սպասենք ուրեմն: Մէկ բան միայն պարզ է առայժմ, այն որ պ. մինիստրը առաջիկայ հարցապնդումին՝ ստիպւած կը լինի աւելի բացայայտ լինել և չպիտի կտրուղանայ այլևս դիւանագէտի ճկուն լեզուով վարագուրել իր մտքերը — քանի որ, ինչպէս տեղեկանում ենք, նրա դէմ կազմակերպւում է մի պատկառելի գրոհ պարլամենտի բոլոր կուսակցութիւններից:

Սպասենք: Եթէ Ֆրանսիական կառավարութիւնը այս անգամ էլ մի կերպ փախուստ կըտայ և «յանուն խաղաղութեան» կը հրաժարի հայկական ողբերգութեան վերջ դնելու անհրաժեշտ նախաձեռնութիւնը ստանձնելու, եթէ այսքան հեղինակաւոր դիմումներից ու մեծագործ ցոյցներից յետոյ էլ դիւանագիտութիւնը կը մնայ ձեռնպահ ու անկարեւոր — tant pis! — Մենք մեր պարտքը կատարած համարելով՝ հանդէպ մեր խեղճ ու յաւերժօրէն մանուկ հասարակութեան և հանդէպ այն մի կարգ բարեմիտ եւրոպացիների, որոնք շարունակ ամբաստանում են մեզ, ցոյց տալով յեղափոխական տարտիկի անպատեհութիւնը — ապացուցած կը լինենք միանգամ ընդմիշտ մեր մի շարք «խաղաղ», «օրինական» ձեռնարկներով, որ հայ յեղափոխականները անուղղելի տարագլուխներ չեն, ամբարիշտ ու կուսակցային ոգիներ չեն, յեղափոխութեան, իբրեւ արեւստի, խանդավառ սիրահարներ չեն, այլ շատ նորմալ ու սովորական մարդիկ, որոնց տանջում է հարազատ ժողովրդի անվերջ մարտիրոսութիւնը և նրանից ելք գտնելու անդիմադրելի տենչը:

Մենք ո՞՞ր կը համարենք այն խաղաղութիւնը, որ գնւած կը լինի մեր ժողովրդի ծովածաւալ արիւնով և իբրեւ հաւատարիմ սպասաւորներ այդ ժողովրդի սրբազան դատի՝ պարտք կը համարենք երբեմնապէս ալէկոծել դիւանագիտութեան փալիայած «խաղաղութիւնը»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՉ

Նոյեմբեր 4-ին, Ֆրանսո-թիւրք վեժին եւ Ֆրանսական Նաւատորմի Միտիլինէ կողմն գրաւելուն առթիւ եղած հարցապնդումներու միջոցին, Մարսէլ Սանթա եւ Տընիս Քոչէն երեսփոխաներուն ծառերը ի նպաստ հայկական հարցին եւ Տեղկաստի ու Վալտէք Ռուսոյի պատասխանները:

Մ ա Ր Ս Է Լ Ս ա ն բ ա. — Նաւատորմիդը մեկնած ըլլալով կը հարցնեմ կառավարութեան թէ ինչ պայմաններով ետ պիտի դարձնէ զայն և ինչ գոհացում կըսպասէ Թիւրքիայէն:

Կ'իմանանք որ սուլթանը նաւատորմիդին ճամբայ կըլնէ իմանալուն, հրաման ըրած է կարգադրել առնելիքը. բայց կը յուսամ որ Թիւրքիայի և Լօրանդոյի գոհացում տրւածին պէս, մենք ետ քաշւելու չենք:

Մեզ ծիծաղելի դրութեան մէջ պէտք չէ դնեն, որ ասանկ ողորմելի արդիւնք մը ձեռք բերելու համար մեր նաւատորմիդը շարժման մէջ դրինք: Արդէն կը խօսուի ուրիշ կարգադրելիք առկա գործերու մասին: Կը հարցնեմ արտաքին գործոց պ. Նախարարին, արդեօք այդ գործերը Թիւրքիայի և Լօրանդոյի տեսակի գործերն են, դրամապաշտներու (mercantis) գործերն են կամ չէ նէ Հայաստանի կոտորածներուն վերջ մը դնելու մասին է գործը: (Ծափահարութիւններ):

Կարծեմ թէ արտաքին գործոց Պ. Նախարարը փափաքին հասած է, որ սուլթանին կողմէ մշակւած վարդերու յատակագիծերը և սպառնալիքները, որոնք մեզի կը խոստանային արիւնահեղ տեսարաններու վերագործը, ուր 300,000 հայեր իրենց կեանքը վրայ տւին, չպիտի գործադրեն: Պիտի խօսի անշուշտ որ Հայաստանը իր նօրմալ (կանոնաւոր) վիճակը գտած է: Կը խնդրեմ իրմէ ճիշդութեամբ թէ ինչ և եւրոպական դիւանագիտութիւնը ինչ կը հասկանան Հայաստանի մէջ յնօրմալ վիճակ՝ ըսելով:

Խորհրդարանը պիտի տեսնէ որ այս նօրմալ վիճակը արդարազանցութեան, կամայական բանտարկութիւններու, գիւղերու աւերակներու, ժամերու և դպրոցներու հրկիզումի, կիներու և աղջիկներու առեւտրութեան երկար շարունակութիւն մըն է, մարդախոշոր բռնակալութեան վիճակն է: Կը ըսուի կը ըսուի կը ըսուի. անշուշտ 1894-ի վարդերէն նազ ծանր, բայց նորէն շարժ չանցնիր որ սպանութիւն չպատահի, ապացուցանելով որ Հայաստանի մէջ նօրմալ վիճակ ըսածը եւրոպայի ամօթ ու նախատինքն է:

Եթէ դուք հրաւիրէք եւրոպայի միւս ազգերը միանալ ձեզի և նմանօրինակ սարսափներու վերագործը արգիլելու համար, սուլթանին պարտադիր ընէք կարգ մը միջոցներ, զոր մարդկութիւնը կը պատրիէ, ունէ բարգուծութիւններէ վախնալու բան չունիք:

Նպատակս չէ հայկական հարցի մասին հիմնովին ճառել: Մեր պաշտօնակիցը պ. Ռուանէ Հայաստանի մասին պիտի հարցապնդէ արդէն, և վիճաբանութիւնը իր ժամանակին պիտի գայ հասնի: Իմ թղթածրարիս մէջ շատ վկայագրեր ունիմ, որոնք կապացուցանեն թէ անհրաժեշտ է միջամտել: Մեր եղբայրակիցը Բիւէ Վիյաու, արդէն արտատպեց հայոց դատին պաշտպան քաջասիրտ Pro Armenia-ի մէջ վերջերս Հայաստանէն եկած ամենաստոյգ վկայութիւններ, որոնք կը հաստատեն թէ Քիւրդերը յարձակելով Մոկուլը գիւղի վրայ, որուն էրիկ մարդիկը բանտերը նետած էին, կողոպտած և յետոյ

բոլոր տները այրած են և կը նկարագրեն այդ դժբախտ երկիրներուն վրայ սաւառնող սարսափը:

Արդէն առաջին դիմումի մը առեւ, արտաքին գործոց նախարարին ուշադրութիւնը դարձուցի այն ծրագրի մասին, զոր սուլթանը կը պատրաստէր այս ձմեռ կոտորածները վերսկսելու համար:

Սասունի մէջ զօրանոցի մը շինութիւնը բնակիչներու կուրծքէն խլեց սա ճիշդ. «պաշտպանեցէք մեզ մեր պաշտպաններուն դէմ»:

Ամեն մարդ գիտէ, որ քիւրդերուն դէմ հայերը պաշտպանելու փափոք կանոնաւոր բանակի զինւորները 1894-ի ահաւոր կոտորածներու հեղինակները եղան:

Կրօնականներ արտաքին գործոց Պ. Նախարարէն, որ յայտարարէ մեզի թէ մեր նաւատորմիդը Արեւելք չէ գացած միմիայն թիւ պիտին և Լօրանդօն պաշտպանելու համար, այլ նաև կոտորածներու վերագործին առջևը առնելու համար: Անտոն զառնալով կրնայ ըսել օտար պետութիւններուն, որ 300,000 հայերու սպանութեան պատասխանատու հեղինակը ան մարդն է, զոր Կլատսդօն կ'անւանէր «Մեծ Մարդասպան», և թէ եւրօպական ազգերը պարտաւոր են ասկէ ետքը այդ մարդը դնել փնտսելու անկարելիութեան վիճակի մէջ (Բուռն Ծափահարութիւններ):

Տ ը ն ի ս Կ օ շ է ն. — Երբ մենք կը բողոքէինք հայկական ջարդերու դէմ, կը մաղթէինք, որ միջամտութիւն մը ըլլար: Իսկ Պօլսոյ քարափներով կարելի էր զբաղիլ այնտեղ, երբ անոնք դժբախտ անմեղներու արիւնով ծածկւած էին: (Ծափահարութիւններ):

Ինչ ալ ըլլայ մեզի գործի մղող շարժառիթը, մեր դրօշակը ալ մէյ մը ճամբայ ելած է: Արդեօք մենք կերթանք պահանջել, որ խոստացած բարենորոգումները կատարուին: Ահա ինչ որ պէտք է ուզել սուլթանէն:

Պէտք է յարգել տալ մեր հովանաւորութիւնը, ապահովել Բերլինի դաշնագրին գործադրութիւնը, կապիտիւլա սիօն երու յարգանքը: Ասոր համար պէտք է համաձայնութեան գանք Եւրօպայի հետ:

Իրաւ է, մենք Ռուսիոյ հետ դաշնակցութիւնով կապւած ենք. բայց պէտք չէ մոռնալ, որ Փրանսայի բարեկամութիւնը իր գինը ունի և պէտք է որ վարձատրուի (Նոր ծափահարութիւններ):

Կ'ուզէի որ Փրանսական դիւանագիտութիւնը դառնար միւս պետութիւններուն և ըսէր. «մենք նախաձեռնութիւն առինք, որովհետեւ աւանդօրէն մենք առաջնութիւն ունինք, բայց ես ձեզի կը հարցնեմ, Բերլինի դաշնագրին ստորագրող պետութիւններդ, թէ դուք չէք ուզիր միանալ մեզի բռնաւորին զօրով ընդունել տալու խոստացած բարենորոգումները, զի ըսկէն յարմար է և արդարութեան ժամը եկած»:

Արտաքին գործոց նախարարը Պ. Տէլկասէ, առաջին յայտարարութիւնով, իբր պատասխան նախորդ երկու ատենաբաններու ճառերուն, ըսաւ.

— Երբ տարի է միշտ շահագրգռւած եմ Հայաստանով և թէ հայերը քանի քանի անգամ իրենք իսկ ճանչցած են մեր գործունէութեան ազդեցութիւնը:

Այս երկու խօսքէն ետք, Պ. Տէլկասէ ծանրացաւ երեք կէտերուն վրայ, որ իրենց հպատակներու առնելիքը և քարափներու խնդիրը կը շօշափէր: Հազիւ իր ճառը վերջացուցած, ծայրագոյն ձախակողմէն զանազան ձայներ ալաղակեցին.

— Հապա՛ Հայաստանը:

Պ. Տէլկասէ երկրորդ անգամ ստիպեցաւ խօսիլ Հայաստանի մասին:

— Իմ դիտողութիւններու սկիզբը ըսի որ հայկական գործերու մասին վերապահած էի ետքէն պատասխանել բայց քանի որ խորհրդարանը բացատրութիւն կը պահանջէ, այսօր իսկ պատրաստ եմ ըսել կառավարութեան մտածումը: (Հատ լաւ):

Ըսի որ մենք պատրաստ էինք պաշտպանել Փրանսայի բարոյական շահերը, ինչպէս մեր մասնաւոր ազգայիններու շահերը:

Բայց միւս կողմէն կրնան ըսել մեզի. «Ի՞նչ դուք միշտ ծօն ֆիշօտ պիտի ըլլաք»: (Զանազան շարժումներ և բողոքներ):

Փ ու ը ն ի է ը. — Պ. Նախարար, մարդ այդպիսի խօսքեր չընեն:

Կը հարցնեն նախարարին, — աւելցուց Պ. Տէլկասէ, յիշեցնելով Հայաստանի վերջին կոտորածները — թէ ինչ մտադիր է ընել Մարդս կը դադրէր մարդ ըլլալէ եթէ անտարբեր մնար ատոնց: Կարգացած եմ բոլոր տեղեկագրերը, որոնք բոլորն ալ կը հաստատեն երկրին ցաւալի դրութիւնը, ուր կը կատարւին սպանութիւններ, կոտորածներ, որոնցմէ ոմանք հերքեցան և ճիշդ չեղան: Ստորգ է թէ 1856-ի և 1896-ի նախատեսւած բարենորոգումները բաւականին չեն գործադրւած, թէ քրիստոնեաները այդ գաւառներուն մէջ չունին այն կացութիւնը, որուն իրաւունք ունին, թէ հայերը ընդհանուր անապահովութենէն ամենէն աւելի տառապողներն են և յաճախ ոճրագործները անպատիժ կը մնան: Մեր հիւպատոսը կը գրէ. երբ կառավարութեան Սասուն ղրկած բանակին հրամանատարը կ'ըսէ որ եկած է հայերը պաշտպանելու քրդերուն դէմ, հայերը չեն ուզիր այդ եղանակով պաշտպանելու զմեզի տեղ երկու թշնամի պիտի ունենայինք» ըսելով:

Նախարարին անցեալը երաշխաւորութիւն մըն է իւր ապագայ ընթացքին. ոչ միտակ Ասիոյ, նաև Եւրօպայի, Պալքաններուն, Մակեդօնիոյ մէջ մեր հանրապետութիւնը չպիտի դադրի իր ձայնը բարձրացնելէ, անխոր բոլոր ազգերուն համար, որպէս զի հարստահարութիւնները դադրին, որպէս զի արդարասիրութիւնը և արդարութիւնը լոկ բառեր չ'ըլլան, որպէս զի հանդիսաւորօրէն ստանձնւած խոստումները վերջապէս յարգուին:

Բայց Փրանսան չէ միտակ Պերլինի դաշնագրութիւնը ստորագրողը: Ինք պատրաստ ըլլալով իր համերաշխութեան պարտականութեան բաժինը լայնօրէն կատարել, չի կրնար մոռնալ այն գերագոյն պարտականութիւնները, որ ունի ինք իրեն հանդէպ»:

Քէի դրած երեք օրակարգերէն խորհրդարանը 227 քուէով 212-ի դէմ, առաջնութիւն տուաւ Մարսէլ Սանթայի հետեւեալ բանաձեւին.

«Խորհրդարանը, համոզւած ըլլալով, որ Փրանսան իր պարտականութիւններուն մէջ թերացած պիտի ըլլայ, եթէ չպաշտպանէ հայերը նորանոր կոտորածներու դէմ, և որոշած ըլլալով խաղաղօրէն ապահովել այդ պաշտպանութիւնը տէրութիւններու հետ միաձայն, կանցնի օրակարգին»:

Ձ ա յ ն մ ը. — Մարդասպաններուն հետ խաղաղութիւն չեն ընել:

Վալդէք Ռուսօ, նկատելով որ նախարարութեան հա-

մար ձախհարած ևը պիտի ըլլայ Սանբայի բանաձևը, մէջ մտաւ և յայտարարեց երեսփոխանական ժողովին, որ կառավարութիւնը չի կրնար ընդունիլ առաջարկած օրակարգը. դահլիճին ստանձնած գործը արդէն ծանր է իր բարգուծիւնով և ընդարձակութիւնով:

Ինչպէս կառավարութիւնը չի զոհեր իր համաքաղաքացիներու շահերը, նոյնպէս իր առաջին մտազբաղումներէն ըրած է ամբողջ բարոյական շահերու հայրենաւանդ մը, զոր պիտի չձգէ որ նւազի: (Շատ լաւ):

Այս գործը գլուխ հանելու համար կառավարութիւնը պէտք ունի խորհրդարանին վստահութեանը:

Սանբայի օրակարգը չի տար այդ վստահութիւնը, ատոր համար կառավարութիւնը կը մերժէ զայն: (Ծափահարութիւն — Շարժում):

Ի վերջոյ Սանբայի բանաձևը մերժեցաւ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԷՆ

30 օգոստոս 1901

Մ շ յ յ և դաշտի հրդեհը. կառավարութեան էնտրիքները. — Մեր նախորդ տեղեկագրերու ընթերցողները անշուշտ լաւ կը յիշեն և կարծեմ երբէք մոռնալու իրաւունք չունին այն բոլոր խժոժութիւնները, որ իգործ դրեցան վերջին մէկ երկու ամսւայ ընթացքին Մշոյ և Դաշտի մէջ: Սոյն տեղեկագրովս ալ կուտանք միայն վերջին մէկ երկու շաբաթւայ մէջ կատարած գլխաւոր անցքերը, թէև արդէն գրելէ ձանձրանալու վրայ ենք և օրըստօրէ աւելի ու աւելի թուանաւոր կերպով կը ճնշէ մեզ այն հարցը՝ թէ ալ ինչո՞ւ գրենք, ո՞ւմ համար գրենք, ի՞նչ յուսով գրենք... Մենք շատ լաւ գիտենք, որ կողմերիս ժողովրդեան կորստեան հարիւրին իննսուն պատասխանատուութիւնը կ'ընկնի ամենէն առաջ մեր հայրենաբնակ և օտարաբնակ հայ եղբայրներու վրայ, որոնք ժամանակին չկատարեցին իրենց պարտականութիւնը, մոռացան անցեալի փորձերը, սպասեցին մինչև այս հրդեհն ալ բորբոքեց և դեռ կըսպասեն... Եթէ այդպէս կը վերաբերին դէպի ժողովրդի տագնապալի վիճակը մեր հարազատ եղբայրները, ալ ի՞նչ ունինք սպասելու ուրիշներէն, ալ ո՞ւմ համար գրենք...

Բացարձակ և անարգել կերպով կատարած սպանութիւններ, գաղանութիւններ, անլուր տանջանքները հայերիս թշուառութեան բաժակը դեռ չլեցուցին կարծես, հարկաւոր էր նորանոր գաղանային միջոցներ ստեղծել վերջերս կազմեցաւ կառավարական պաշտօնեաներէ, թիւրքերէ և քրդերէ հրոսախմբեր՝ քողի մը ներքև՝ միմիայն հայերը կոտորելու նպատակով: Այս հրոսախուժը իրարէ ետեւէ յաջորդաբար յարձակում գործելով Դաշտի գիւղերու վրայ, սպաննեցին Գառնի գիւղէն 4 հայեր, Առաղէն 6, Բիշիյէն 8, Յունանէն 4, Մղսէէն 2, Շմլակէն 1, Ալվառիսէն 1, Վարդենիսէն 1, Սեմալէն 1, Մշոյ վերին թաղէն 1: Ամբողջը 29 հայեր: Այլևս հայերի հարստութիւնն — ոչխարն ու տաւարը աւարի առնելու կարեւորութիւն չտրւիր ընդ այս ծրագրով թէ ի՞նչ պէտք է ջնջել հայ տարրը՝ արդէն նրա ունեցածը մերն է: Հրկիպեցին Մառնիկ հայ գիւղը: Մշոյ քաղաքին մէջ ալ փորձեր կը կատարին յարձակում գործել առաջնոր-

դարանի և հայ թաղերու վրայ: Հայ տարրը բոլորովին յուսահատ, մշուշի մէջ մոլորած կռուակի նման կը տարուբերի. իւրաքանչիւր հայ կըսպասէ թէ ի՞նչ վրայ յարձակում գործելու և իր կեանքին ալ վերջ տալու կարգը ե՞րբ պիտի հասնի: Ի՞նչ ընէ հայ ժողովուրդը, ի՞նչ հող տայ գլխին. ինչո՞վ պաշտպանէ իր կեանքի և պատւոյ գոյութիւնը:

Մշեցի Մէհմէդ աղա անուն թիւրքը, որ կը բնակի Դաշտի Գեմիկ գիւղ, որ Իտարէի աղա (կառավարչի — միւթէսարիֆի — խորհրդի անգամ) է, սորա որդին Զուպրի միացած պելպաշի քիւրդ աշիրէթի հետ յարձակում գործեցին Ծխաւու և Կուրավու գիւղերու վրայ և իֆէդայիներ կան ձեր գիւղի մէջ՝ ըսելով կըսխիսն խուզարկել, ծեծել, հրացանի գնդակներով վիրաւորել անմեղ գիւղացիները, վերջապէս անլուր տանջանքներ տալէ յետոյ երբ ոչ մի վնասակար բան չեն գտներ, աւարի կառնեն 2 գիւղերու ամբողջ ոչխարներն ու կը վերագառնան: Մի՞թէ Մա համէդն ու սուլթանը իրաւունք տւած չեն իւրաքանչիւր իսլամի խուզարկութիւններ կատարելու, ամէն գաղանութիւններ ի գործ դնելու, վերջապէս հայ տարրը բնաջինջ ընելու:

Մշոյ քաղաքի ժողովուրդը, երկար ու բարակ խորհրդակցութիւններ կատարելուց յետոյ, հազիւ հազ համարձակեցաւ դիմումներ կատարել սուլթանական պալատ և սուլթանի ոգով ներշնչած պատրիարքարանը, սպասելով, որ սուլթանը, այդ մարգակներ գազանը, դեռ հացի փշրանքներ պիտի տայ հայերին: Ահա արդիւնքը. — պալատէն գաղտնի հրահանգ կը տրուի տեղւոյս կառավարչին, որ ջանայ ամէն միջոցներ ի գործ դնելով կայսպարել կատարած գաղանութիւնները և հայ յեղափոխականներին վերագրել այս դժոխային գործողութիւնները: Այս ծրագիրը իրագործելու համար Բաղէշի կուսակալը կրկին վերագարձաւ Մուշ: Այլայի պէտք, Թապուր աղասին և Մշոյ երեւելիներէն յայտնի բարբարոս Խալիլ էֆէնտին ելնելով Դաշտի գիւղերը խուժը մը ոստիկաններով բռնութեան, սպանալեաց և անվերջ տանջանքները սկսեցին հանրագիր կնքել տալ հայերին. թէև շատերը կը դիմագրեն, սակայն ոստիկաններով կը տարին Մուշ կը բանտարկին: Օրինակ մը: Մշոյ Բերգակ գիւղացիներուն՝ ժողովելով եկեղեցւոյ մէջ, երեք սնտուկ քարիւղ բերել կուտան և կառաջարկեն, ի՞նչ կըստորագրէք և կամ գիւղը կրակի կուտանք: Վերջապէս տանջանքներու տակ գիւղի քեթիպին ստորագրել կուտան և կը հեռանան: Արդեօք ի՞նչ հարկ հանրագիր մը կնքելու համար այսքան գաղանութիւններ ի գործ դնել: Ո՞վ է հարցնող և ի՞նչ պատասխանատուութիւն կը ծանրանայ իրենց վրայ: Ո՞վ չգիտէ որ այս բոլոր արեան շոգիները դուրեկան են նաև անխիղճ, անգութ Եւրոպային ալ:

Այժմս ալ կը լսուի, որ Կարինէ 4 թապուր զօրք կուգայ քննիչ յանձնաժողովով մը. պարզ է՝ բացարձակ կերպով կատարած կոտորածներն ու ջարդերը կաղապարելու համար:

Մշոյ և Դաշտի աչքի գարնող անձնաւորութիւններու նկատմամբ ընդարձակ մատնութիւններ կատարած են. մատնիչը դեռ ստոյգ չգիտցուի: Վերջերս Մշոյ քաղաքացի Բուէեան Միսակ, Միրիճանեան Միհրան, հաճի

Յակոբ, Պօլէի Մձօն, Կօշկակար Վաղարշակ և ըն հայեր փնտռեցան իբրև յեղափոխական գործիչներ, որոնք փախուստ տւին. հաստատ գիտնալով, որ կառավարութիւնը առանց չոր ու դալարը փնտռելու պիտի մատնէ բարբարոսական տանջանքներու, ինչ որ արած է ամէն մի բանտարկեալ հայի: Տեղւոյս բանտային կեանքն ու կատարած դիւային գազանութիւնները նկարագրելու համար թերթեր են պէտք, տոկուն սիրտ է հարկաւոր, այն էլ անշուշտ անհաւատալի պիտի երևի լսողներու համար, ուրիշն այդ մասն ալ սովորական գազանութեանց կարգն հաշուելով անցնենք վրայէն: Մոկունքի հայ գիւղացիք դեռ բանտն են. հարկաւոր կիներ ու երեխաներ դեռ Մշոյ փողոցներ կը մուրան. գիւղն ամբողջ դեռ կը մնայ: Բանտին մէջ տիրող հիւանդութիւնն երթալով համաճարակ կը դառնայ: Մոկունքիցիներէ 6 հոգի մեռան բանտին մէջ. մնացածներն ալ հոգեւորք վիճակի մէջ են: Մշեցի Դաշոյեան Միքայէլը, որ ոստիկանի մը զրպարտութեամբ բանտարկեալ է 3 տարի վճիռ տրեալ էր՝ առանց փոքր ապացոյց մը ունենալու՝ մեռաւ: Մահան վրայ ալ սատանայական քրքիջներ արձակելով դիակները դուրս կը նետեն:

Այս բոլորն ալ դեռ մեզ չյուսահատեցուց. դեռ կը միտնալէնք գէթ այն յոյսով, թէ մեր ազատութեան համար տրեալ արիւնը, զոհը, կախաղանը գէթ թոյլ պիտի տար մեզի իբրև հայ մեռնելու, սակայն այդ յոյսներս ալ ահա կըսկսի մարիլ:

Մշոյ և Դաշոյի հայը, տիրող դրութենէն բոլորովին յուսահատ, օրթոդոքսութեան կը դիմէ. հանրագրեր պատրաստած են և ամէն կերպ աշխատութիւններ կը լինին: Երանի թէ բոլորովին բնաջինջ լինէինք, քան այսպիսի ազգայնական անպատիւ ձեռնարկ մը լինէր: Այդ թուրքն ու նախատինքը թող լինի Մշոյ այն սերուդին, որ ցարդ ժողովրդի մէջ չէ կրցած մարմնացնել յեղափոխութեան տարրական սկզբունքները:

Այս է մեր ներկայ կեանքը, դէպի ո՛ւր կը տանի մեզ ներկայ դրութիւնը, այդ հեղեղի հոսանքը ո՛ւր պիտի հանէ մեզ՝ մենք ալ չգիտենք և գիտնալու հետաքրքրութիւննիս ալ օրըստօրէ կը կորսնցնենք...

2 սեպտեմբեր

Տեղւոյս ժողովուրդը, սուլթանի ոգով ներշնչած պատրիարքի ընթացքէն յուսահատելով, կրօնափոխութեան կը դիմէ: Տեղս եկած է վանայ ռուսական հիւպատոսը, որուն կը պատրաստին կնքած հանրագրեր յանձնել հակառակ մեր թափած բոլոր ջանքերուն: Տեղս եկած է Վարնոյ ֆէրիքը, Հասնոյ հազարաւոր զօրքերը բաժնեցին Դաշոյի կասկածելի գիւղերի վրայ. կտրեցին Սասունի և Դաշոյի յարաբերութիւնը, իբր թէ բարեկարգութիւն մը կաշխատին մտցնել, բայց խաղ մը կերևի: Վանայ ռուսական հիւպատոսը Մոկունքի հրդեհած տունները ու ցանքերը քննելէ և մոկունքիցիներ հարցաքննութեան տակ առնելէ յետոյ, այժմս կը բնակի Մշոյ մէջ: Այլ խօսելի, որ ուրիշ ներկայացուցիչներ ալ պիտի գան, բայց ստոյգը չի գիտցելի: Ինչպէս կերևի կառավարութեան արդի նպատակն է, հայերին այնպիսի դրութեան մէջ մտցնել, որ ոչ մի յեղափոխական շարժում կամ երթևեկութիւն չլինի:

10 սեպտեմբեր

Վերջին մի քանի ամսւայ մէջ կողմէրս վառած հրդեհի ու անվերջ սպանութիւնների կողպուսների հետեանքն

եղաւ այս. — տաճիկ կառավարութիւնը թափեց տեղս բաւական մեծ քանակութեամբ զօրք. եկող զօրքերը տեղաւորեցին Դաշոյի այն գիւղերու մէջ, որոնք Սասունի և այլ գաւառներու երթևեկութեան գծերն են: Այլ կասկածինք նոր չարիք մը կատարւի, այնպէս որ եղածները մոռնանք: Սուլթանի հրամանով բռնութեան ներքէ հանրագրեր ժողովուրդեան կատարած չարքները յեղափոխականներին վերագրելու նպատակաւ: Տեղս հասած վանայ ռուսաց հիւպատոսը անցեալ օրւայ հեռագրով փոխ-հիւպատոս կարգեցաւ: Ժողովուրդն ալ բոլորովին յուսահատ և նամանաւանդ զլւած սուլթանի ոգով ներշնչած պատրիարքի ընթացքէն, օրթոդոքսութեան հանրագրեր յանձնեց ռուս հիւպատոսին, որ հրահանգ կուտայ դադարի պահել այդ հարցը մինչև բանակցելով կղերականներ բերել տալ:

Տարած անգթօրէն Վարնոյ բանտը նետած են եօթը մշեցիներ՝ Պետիկ, Բարսեղ, Առիկ, Հայրօն, Հայկ, Տէր-Վարդան, Նազար Խաչիկեան:

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԵՆ

7 հոկտ 1901, Վան

Խիզնու շէյխն վերջերս ճանապարհորդութիւն մը ըրաւ մինչև Պուլանդա: Ուսերիմ թշնամի լինելով քրիստոնէութեան՝ բոլոր աշիրէթներու մէջ կը քարոզէ թողնել ցեղական կռիւներ, միանալ իրար հետ և ամէն ճիգ թափել երկիրը մաքրելու պիղծ գեաւորներէ:

Տուրքերու հաւաքման համար անտանելի խստութիւններ կը լինին քաղաքին մէջ ալ՝ նոր արձակած զինուորներուն գէթ մի բան վճարելու համար, որոնք 7-8 ամիսներէ ի վեր կրսպասէին և դրամի չգոյութեան պատճառաւ մնացած էին զինուորութեան մէջ: Սեպտեմբեր 6-ին 100-ի չափ զինուորներ յարձակեցան հրամանատար ֆէրիք Հիւսէին փաշայի կառքին վրայ և դրամ պահանջեցին. հրամանատարը կառքէն վար իջնելով սպաննու հետ գանակոծեց այս ըմբոստները և ոչխարի պէս քշել տալով զօրանոցը բանտարկել տաւ: Մուրացկանի պէս այս ու այն անկիւնը ինկած դրամ կը մուրայ զինուորներու համար, որոնք կը հաստատեն թէ իրենց հաշւոյն եկած դրամներ բարձրաստիճան պաշտօնեաներու տրեալ է: Անոնք մաս առ մաս իրենց տեղերը կը զրկին, սակայն վայ ճանապարհի վրայ գտնւած հայ գիւղերու. ինչքէն քաշեր այս բարբարոս անօթիներու ձեռքէն:

Հայտարանցի աշիրէթի պետ և համիդիէի գնդապետ Քէօռ. հիւսէին փաշայ, իր ցեղակից Հաճի Թէմուր և Էմին փաշաներու, և վերջինիս հղբայր Ալի պէկի հետ 50-ի չափ խօլամներով վերջերս Վան եկաւ մոկացի շէյխի մը աղջիկը կնութեան առնելու: Տեսնելու արժանի էր այս աւազակներու կոկովալիզ թափառիլը Վանի և այգեստաններու մէջ բոլորն էլ ձօսինի և մարթինի հրացաններով զինուած: Հիւսէին փաշայ, իբրև պաշտօնական անձ այցելութիւններ տաւ կուսակալին, զինուորական հրամանատարին, Անգլիոյ հիւպատոսին և ուրիշ պաշտօնական անձերու: Ամէն կողմէ յարգանք և պատիւ կը շնայուէր այս գազանին, որ կարմրուկ ոսկիներ կը սփռէր փոխադարձաբար:

Այս մարմնացած ոճրագործութիւնը Պատնոց, Սարը

Սու, Ալճավազ գաւառներու հայ ժողովրդեան արիւնը տղրուկի պէս կը ծծէ. գայմագամներ կը սոսկան իրմէ, և վայ ալ կառավարական պաշտօնեային որ իրեն քմահաճոյքը չի կատարեր. սպառնալիքով և բռնութեամբ պաշտօնանկ ընելու իշխանութիւնը ունի շնորհիւ միւշիւր Զէքի փաշայի:

Անցեալ տարի Ալճավազ գաւառի հայեր չկրնալով դիմանալ անոր բռնութիւններուն՝ իրենց գիւղապետներ ղրկեցին տեղս կուսակալին բողոքելու: Բ Դուռը երկար հեռագիրներ տալէ, տեղական հիւպատոսներու գիմելէ և երկար ամիսներ թափառելէ վերջ հազիւ կարողացան իրենց պահանջներէն երկուքը գործադրել տալ. այն է, իրենց գիւղերն բռնի բնակող քրդերն վտարել տալ, և կարգ մը տեղեր պահապան զինուորներ բնակեցնել Հիւսէին փաշայի աւարառութիւններու առջևն առնելու համար: Բոլորովին անլսելի մնաց անցեալի մէջ եղած չարագործութիւններն ու սպաննութիւններն:

Հիւսէին փաշայի գործին չէր գար թիւրք զինուորներու գոյութիւնը գիւղերու մէջ, 1-2 ամիս հանգարտ մնաց, սկսաւ ձեռքի տակէ աշխատիլ, և ահա պատեհ առիթն ալ ներկայացաւ: Առէն գիւղը տաւարներն յափշտակեցին նոյն փաշայի քրդեր. պահապան զինուորներ կը հետապնդէին. կուր մէջ մի կաղ քիւրդ կըսպաննուի և միւսներ կը փախչին: Հիւսէին փաշայ իրողութիւնը բոլորովին խեղաթիւրելով՝ բողոքեց զինուորներու դէմ. կառավարութիւնը, որ արդէն առանց թմբուկի կը խաղայ, անմիջապէս զինուորները հեռացուց գիւղերէն և վերոյիշեալ կուրն մասնակցող եօթը զինուորներ դատի ենթարկեց: Խեղճերը վերջերս կը պատրաստէին իրենց հայրենիքը գնալու, ժամանակամիջոցին լրացած լինելով, գաւառի դատարանը եօթնական տարւան բանտարկութեան դատապարտեց զանոնք: Ասպարէզը դարձեալ Հիւսէին փաշային էր. աւեր և կողոպուտ սկսան: Սպառնալիքի տակ շնորհակալութեան գիր մը ստորագրել տուաւ նոյն գաւառի հայերուն և ղրկեց Զէքի փաշային, ինչպէս երբեմն սուլթանի համար կը լինէր Եւրօպան խաբելու: Վրէժ-խընդրութեան ժամն էր այլևս. բողոքող հայեր սկսան դողալ. այլևս ուր դիմել, կամաց կամաց վզերնին ծռեցին անոր լուծի տակ: Քիւրդեր գիշերանց պաշարեցին Գոչերի գիւղի Մելիք Գասպարի տուն, որ փախչելով մահանէ ճողոպրեցաւ: Սա բողոքողներու ամենահամարձակը կը սեպուէր: Մահան սպառնալիքի տակ ուխտագնացութիւն մը սկսաւ. բողոքողներ ճար ճուր ընելով կարմիր ոսկիներով գնացին փաշայի ոտքը համարելու և ներողութիւն խնդրելու: Բացի ասկէ Հիւսէին փաշայ 200 ոսկի պահանջեց իբրեւ ծախք զոր պատճառած են եղեր իբր բողոքողներն և նոյն քանակութեամբ ալ ցորին: Սակայն թէև ամէն կողմէ լքած, դարձեալ ընդդիմանալու քաջութիւնը ունեցան ուսնք, լաւ համարելով ոչնչանալ քան ստրուկ դառնալ այդ ստոր արարածին: Այդպիսիներու կարգէն են Գոչերի գիւղացիները:

Գոչերցիներ արդէն դատաւարութեան մէջ էին Հիւսէին փաշայի դէմ, որ իրենց գիւղի սեփական մի ընդարձակ արօտատեղիի տիրապետած էր: Այս գիւղացիներ շատ պարագաներու մէջ անոր չարութիւններն ի դերն հանած էին և այսպիսով վրէժխնդրութիւնն աւելի գրգռած: Օգոստոսի վերջերն իբր ինք Վան եկաւ, իր դրամամբ և հրամանաւ համդիէյի հազարապետ Հասան աղայի լամուկ Գասիմ և Շափէշի լամուկ Թէմո վեց զինւած

քիւրդերով յարձակեցան նոյն գիւղին վրայ (սեպտ. 1) և օրցերեկով ժամը 9-ին (ը. թ.) գիւղի տաւարն քշեցին տարին: Գայմագամը, որ Պարկատ գիւղը (1 ժամ հեռու Գոչերիէն) կը գտնուէր, բոլորովին մերժեց հետապնդել աւագակներն. իսկ բաւական վերջն ալ ղրկած մի յիսնապետ իր զօրքերով կէս ճանապարհին ետ դարձան, վախնալով և կամ լաւ ևս դիտմամբ:

Գիւղացիներ այլևս յուսահատ կը դիմեն կուսակալին և համարձակ կ'առաջարկեն. «Կամ պաշտպանութիւն, կամ գաղթելու հրաման, կամ՝ զէնք ինքնապաշտպանութեան համար». կուսակալը կը խոստանայ աւարը ետ առնել և հայոց առաջնորդ Սահակ վարդապետը կը ղրկէ Հիւսէին փաշայի քով: Վերջինս կը խոստանայ իր տեղը վերագարձածին պէս աւարը վերագարձնել: Սակայն իր զայրոյթը ծայրայեղ աստիճանի հասած է և ստոյգ վախ կայ թէ մօտերս անպատճառ գլխաւորներէն երկուքը սպաննին: Արդէն անոնցմէ մէկին, Մելիքի վրայ, նոյնիսկ օրերս քաղաքի ճանապարհին վրայ իր խուլմանը Մուքայէլ և Շապապ յարձակեցան երկսայրի սուրերով, բայց ոստիկաններու վրայ հասնելով՝ հազիւ հազ ազատեցաւ: Հակառակ Մելիքի բողոքին, ոստիկանները կը թողնեն քիւրդերը, որ շարունակեն իրենց ճանապարհը:

Սեպտեմբեր 12-ին նոյն գիւղէն Խաչօյի եզը կը յափշտակեն և կը տանին Հասան աղայի տուն: Գիւղացիին եղբայրը յիսնապետի մը հետ կերթայ պահանջել Հասան աղայ գիւղացին լաւ մը ծեծելէ վերջ կ'ըսէ. «Դուք ձեր գլխէն վախցէք. մալն ինչ է որ հետամուտ կը լինիք. սպասեցէք, ձեր անիծած գիւղը բոլորովին պիտի ջնջենք». իսկ յիսնապետը լուռ հանդիսատես լինելէ վերջ հայերու քով ինքզինք կ'արդարացնէ. «Նա համդիէյի հազարապետ է, իսկ ես յիսնապետ, ի՞նչ կարող եմ ընել»:

Սեպտեմբեր 4-ին շէմշիկցի համդիէ Հասան աղայի խօլամներ գիշերւան ժամը 1-ին (ը. թ.) յարձակեցան Քուել գիւղի վրայ, որ Մահմուտիէ գաւառին մէջ 55 հայ տուններ կը բաղկանայ: Երեք քառորդ ժամ գիւղին վրայ կրակ ընելէ վերջ 250-ի չափ ոչխար կը քշեն կը տանին, հակառակ երեք թիւրք զինուորներու ընդդիմութեան, որ նոյն օրը գիւղը կը գտնուէին: Գիւղի քիւրդ պահապանը կըսպաննուի. իսկ աւագակներէն մին կը ձերբակալուի և կը տարուի Խօշաբ: Հայեր ուղղակի կ'ամբաստանեն Հասան աղան, սակայն աս կըսկսի գայմագամին ներկայութեան գանակոծել հայերն և հայհօյել անոնց կրօնքը, խաչքը: Գայմագամը կը վռնդէ հայերն, որոնք Վան եկած են այժմ կուսակալին բողոքելու. թող սպասեն ամիսներով:

Մահմուդիէ գաւառի հայերը բացարձակ գերի են դարձած վերոյիշեալ Հասան աղայի, Մասուր և Ռաշվան պէյերու, Մուլլահիւսէինի, որ վերջերս ութ անձ կրօնափոխ ընել տուած է, Թէմիր օղու Սէֆէրի, Մահմուտ աղայի, որ հայաբնակ գիւղի մը տիրապետած և եկեղեցին ալ մզկիթ դարձուցած է: Այս տարւայ մայիսին վերոյիշեալ Քուել գիւղէն մի հայ աղջիկ կը փախչնէ Քընտօ անունով մի քիւրդ: Աղջիկը իրեք ամիս բռնութեամբ պահուելէ վերջ կը փախչի դէպի Վան: Ճանապարհին կը բռնուի Վղդի գիւղի (Հայոց Ձոր) մալ միւտիւրի Ռէշիտ էֆէնտիէն, որ չարաչար կը ծեծէ աղջիկը և կուզէ մահապահանջներ: Հայերու բողոքին՝ աղջիկը կը ղրկեն քաղաք: Ճանապարհին ալ զափթիկներ զանազան նե-

ընթացումներ տալէ վերջ կիսամեռ կը հասցնեն հայոց առաջնորդարանը:

Օգոստոսի մէջ սպարկերտցի աղջիկ մը հարս կը տարւէր Մոկս. ճանապարհին կ'առեանգեն քիւրդեր և կը տանին Խիզնու շէյխի քով իսլամական կրօնքն ընդունել տալու: Աղջիկն գեռ կը մնայ հոն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

IX

Այդպէս շարունակաբար յօշոտում էր Տաճկաստանը: Այն վիժխարի ուժը, որ երկու դար սրանից առաջ սարսափի մէջ էր պահում ամբողջ Արեւմտեան աշխարհը, այժմ քարշ էր տալիս մի ողորմելի գոյութիւն և այն՝ միայն շնորհիւ Եւրոպայի աջակցութեան: «Ուայան», ստոր, զազրելի «գեռափուրը» սպառնական գլուխ էր բարձրացրել կայսրութեան բոլոր սահմաններում և կիսալուսնի խաւարման փողն էր հնչեցնում անդադար:

Չուլաճ ալլազան ու կենտրոնախոյս տարրերից՝ իսլամական Թիւրքիան երբէք չկարողացաւ ներկայացնել օրգանական մի հասարակութիւն: Մինչև 60-ական թվերը մահմեդականները փոքրամասնութիւն էին կազմում: Այնուհետև անջատուած քրիստոնեայ երկրներից, օսմանլիները սկսեցին չել գէպի Թիւրքիա և մահմեդական տարրը կամաց-կամաց խտացաւ, կենտրոնացաւ: Այնուամենայնիւ նա երբէք չկազմեց ձոյլ միապաղաղ ազգային ամբողջութիւն, որ կարողանար առաջ մղել կուլտուրական գոյութեան կռիւը և կլենլ մարսել կայսրութեան այլադաւան տարրերը: Իշխող տարրը ստոր էր ու այս յից ամէն տեսակէտով: Ղուրանը և ցեղական-անտրոպոլոգիական ողբալի ֆակտորները պահում էին նրան մշտնջենական անշարժութեան մէջ: Այդ անշարժութիւնը ցայտուն կերպով երևան էր գալիս արդէն տնտեսական կեանքում, որի զարգացումը էական պայմանն է մի երկրի առաջադիմութեան: Թիւրքաց պետութիւնը, որ հաւատարիմ արտայայտիչն է օսմանեան թելի, երբէք չէրախուսեց երկրի առևտուրն ու արդիւնագործութիւնը, ընդհակառակը՝ ամենափայրեցիկ միջոցներով միշտ խեղդել ջանաց տնտեսական ուժերի փթթումը և անհատական նախաձեռնութեան ոգին:

Թիւրքիան լաւ էր ըմբռնել, որ իր թուլութիւնը առաջանում է հպատակ ազգերի ալլազանութիւնից: Եթէ լինէին միմիայն օսմանլիներ, չէին լինի ապստամբական շարժումներ և Եւրոպական միջամտութիւն: Պէտք էր ոչնչացնել կենտրոնախոյս ձգտումները: Բայց քանի որ իսլամը անընդունակ էր այդ անել խաղաղ, կուլտուրական ճանապարհով, մնում էր ուրեմն կտրուկ, գործնական ուղին՝ աստիճանական, սխտէմատիկ բնաջնջումը: Սուլթանները վաղուց ըմբռնել էին այդ մեթոդի «անհրաժեշտութիւնը»: Նա արտայայտում էր մերթ մասսային ջարդերի, մերթ արհեստական սուլի ու բռնի գաղթականացման մէջ. բայց նա կիրառում էր անշեղ բարբարոսային հետեւողականութեամբ: Եւ հէնց թալանի ու սպանութեան այդ ողբալի քաղաքականութիւնն էր, որ պատրաստեց իսլամի հոյակապ անկումը:

Ամէն անգամ, երբ հպատակ քրիստոնեայ ազգերից մէկը վերածնութեան և անկախութեան նշաններ էր ցոյց տալիս, Թիւրքական խարազանը գալիս էր հնձելու վտանգաւոր ուժերը և ամայացնելու շէն գիւղերն ու քաղաքները: Բայց և ամէն անգամ այդ խարազանի գէմ խոյանում էր անմիջապէս մի ուրիշ խարազան — Եւրոպական միջամտութիւնը, որը գրեթէ միշտ յաղթական պատերազմով կամ խաղաղ ճանապարհով աջողում էր խել արիւնոտ զոհին դահձի ձիրաններից:

Գրեթէ միշտ, այն... Եւրոպական խարազանը մի շտ հաւատարիմ չմնաց իր ազատարար կոչման: Նա մերթ ընդ մերթ վրիպեց, չարաչար դաւաճանելով քաղաքակրթութեան դրօշին: Բայց այդ վրիպումը երբէք այնքան ճշացող, երբէք այնքան աղետալի չէր եղել, ինչպէս 1878-ից յետոյ, յընթացս այն մեծ, շառաչալից դրամայի, որի անունն է Հալկական ճգնաժամ: Այդ ճգնաժամը ևս ունեցաւ իր նախընթաց անհրաժեշտ մօմէնտները — ազգային վերածնութիւն և ազատագրական շարժումներ...

Տասնիններորդ դարը սահմանաքարը դրեց նաև հայի ստրկութեան: Այն ժամանակ, երբ Թիւրքահպատակ բազմաթիւ ցեղեր խորասուզած էին արևելեան ճահճացած մթնոլորտում՝ ծոյլ ու անտարբեր գէպի քաղաքակրթութեան համասփիւռ ճառագայթները, հայը սկսեց կամաց-կամաց թօթափել իր վրայից հինգ դարու գերութեան մղձաւանջը և խաւարի ու տառապանքի աշխարհում ցոյց տուեց առաջադիմութեան փայլուն նշաններ: Իր արտասովոր կենսունակութեամբ, իր ձկուն ու գործօն հանճարի շնորհիւ, հայկեան փոքրաթիւ ցեղը կարողացել էր գլուխ դուրս բերել պատմական ահեղ փորձութիւններից, մղել էր յաղթանակով գոյութեան ու քաղաքակրթութեան պայքարը երկար ու ձիգ դարերի ընթացքում՝ անընդհատ նւաճողական արշաւանքների, խուժուժ ցեղերի ու պետութիւնների գէմ, և հասել էր 19-րդ դարին, ուր պիտի վճուէր նրա լինել-չլինելու խնդիրը...

Քառասնական թվերից հայկական իմացականութիւնը տալիս է արդէն իր բողբոջները, հիմնում են դպրոցներ Տաճկահայաստանում, Մխիթարեանների հրատարակութիւնները սկսում են տարածւել խրախուսում և ժողովրդային լայն դաստիարակութիւնը: Արեւմտեան և մասնաւորապէս Ֆրանսիական գաղափարները մուտք են գործում հայ ուսումնագէտ երիտասարդների միջոցով և սկսում են կեանք ներշնչել մահացնող մթնոլորտին: Թիւրքահայերի վերածնութեան մեծ զարկ տուեց նաև Սահմանադրութիւնը (1860): Որքան և խորթ է հնչում այդպիսի մի անուն Թիւրքաց սպանիչ ուժի մի տակ, այնուամենայնիւ սահմանադրութիւնը իրողութիւն էր և մի շատ խոշոր նւաճում հայ տարրի համար: Ուրիշ յետամնաց ցեղերի դիմաց՝ հայը ցոյց տուեց, որ ինքն այնքան հասունացել է արդէն, որ կարող է վարել իր ներքին գործերը և դրանով էլ շեշտեց իր քաղաքակրթական միասին Արևելքում:

Հետզհետէ բազմանում են ազգային կրթարանները մայրաքաղաքում ու գաւառներում, բնում են ընկերութիւններ, հայկական բարեգործութիւնը բաց է անում իր գանձարանը ազգային պէտքերի համար. հիմնում է պարբերական մամուլ, տպարանը հաստատում է նոյնիսկ Հայաստանի կուսական խորքերում — Վարաքայ

լերան գագաթին. մշակում է հայոց աշխարհաբարը, ծաղկում է ինքնուրոյն և թարգմանական գրականութիւնը. Պօլսում ծնունդ է առնում հայկական թատրոն. բազմաթիւ հայ երիտասարդներ դիմում են Պարիզ զանազան ուսումնասիրութիւնների համար. հայի ձեռքն է ընկնում Հայաստանի առևտուրն ու արդիւնաբերութիւնը: Նա հանգիստանում է ճշմարիտ կուլտուր-տրեգեր, քաղաքակրթութեան տարածող և միջնորդ եւրոպայի ու Ասիայի միջև:

Այդպիսով ստեղծւում, կազմակերպւում է օսմանեան կայսրութեան ծոցում հայ համայնքը իր յատուկ ազգային կերպարանով:

Առաջագիմութիւնը, ընդհանուր առմամբ, այնքան զգալի էր, որ Հաքստհաուզէն՝ հռչակաւոր գիտնական ճանապարհորդը՝ պնդում էր, թէ հայը միակ քրիստոնեայ ժողովուրդն է Տաճկաստանում, որ ընդունակ է կազմակերպւելու իրրեւ ճշմարիտ հասարակութիւն:

Վերածնութեան փրկարար հոսանքով տարւում էր նաև հայութեան միւս խոշոր հատւածը — կովկասեան Հայաստանը: Հէնց որ ռուսաց տիրապետութիւնը փոքր ինչ կարգ սահմանեց այդ ալեծուփ ու անիշխանական երկրում, այդտեղ ևս շուտով փթեց հայի բեղմնաւոր իմացականութիւնը և հայրենիքի մտաւոր ու տնտեսական կեանքին հաղորդեց անսովոր կենդանութիւն: Մին-միւսի ետեւից երևան եկան ռուսահայոց վերածնութեան շամպիօնները՝ Աբովեան, Նազարեան, Նալբանդեան, որոնք եւրոպական առաջադէմ գաղափարներով զինւած, լուսաւորութեան ջանք ձեռին՝ ճգնում էին փոքր ինչ լոյս սփռել ազգային խաւար իրականութեան վրայ: Այստեղ ևս դպրոցներ, ազգային մամուլ ու գրականութիւն, այստեղ ևս հայը առաջնակարգ դիրք գրաւեց տնտեսական-արդիւնաբերական կեանքում: Եւ արարատեան հայութիւնը, ինչպէս և օսմանեանը ճիգ էր թափում առաջ մղելու ընդհանուր ազգային վերածնութեան գործը:

Քաղաքացիական արիութեան կցւում էր նաև զինուորական արիութիւնը: Ռուսների Կովկասում մտնելու օրերից, ինչպէս նաև Ցաւրօսի գագաթներին, հայը ապացուցեց, որ ինքը ընդունակ է նաև դիւցազնական սխրագործութիւնների:

Ձեյթունը իր կիսանկախ գոյութեամբ ու յաղթական կռիւներով եւրոպայի հիացմունքն էր շարժել 60-ական թւերի սկզբներին: Հայկական Մօնտենեգրօն՝ Տափրոսի պնառիկ լեռներում ամրացած՝ կազմում էր զաշնակցական մի հանրապետութիւն իր իշխաններով, պարզ, անպաճօճ, նահապետական կենցաղով, նման այն ազատ, ինքնավար Գենսական հաստատութիւններին, որ մենք հանդիպում ենք նախնական վիճակում, մարդկային պատմութեան արշալոյսին:

Միշտ ըմբոստ ու անընկճելի՝ նա վաղուց յայտարարել էր տաճկին «ակն ընդ ական»-ի օրէնքը և իր անմատչելի ապառաժներից կարողացել էր միշտ յաղթական կերպով յետ մղել թշնամու գրոհը: 1862-ի փայլուն ճակատամարտը, որ մեծ ու աղետալի շառաչում ունեցու եւրոպայում, մի առանձին տեղ ունի Ձեյթունի և հայոց ազատագրութեան պատմութեան մէջ: Կանգ առնենք այդ էպիզոդի վրայ. նա վերին աստիճանի նշանակիչ է ոչ միայն հայի ռազմական կորովի տեսակետից, այլև իբրև անբաժանելի մի օղակ արհաւիրքների այն երկարաձիգ շղթայի, որի մի ծայրը հասնում է յունաց

ջարդերի շրջանը (20-ական թւականները), միւսը ձգւում է մինչև հայկական տագնապի օրերը և աւելի հեռուն: Ձեյթունի դէմ լարւած այդ դաւադրութեան մէջ մենք նշմարում ենք միևնոյն էլէմէնտները, որոնք յետոյ երևան եկան Մեծ-Հայաստանի կոտորածներում:

Ձեյթունը խեղդել էին ուզում: Թիւրք բռնապետութիւնը վերջին յուսահատ ճիգն էր անում՝ ոչնչացնելու հայի անկախութեան մնացորդները: 1862 թ. օգոստոս ամսին էր, որ Ազիզ փաշան Պօլսից ստացած հրահանգներով յարձակում գործեց Ձեյթունի վրայ: Պատրւակը չնչին էր և հնարովի: Կոտորածի համար նախնական պատրաստութիւններ տեսնւած էին: Մարաշ և շրջակայքը լցրել էին նախօրօք չէրքէզների ու բաշիբօզուկների փոխակներով, որոնք ռուսաց յաղթութիւններից յետոյ չւել էին Կովկասից և սիրայօժար ապաստան էին գտել թիւրքաց իշխանութեան սահմաններում: Թշնամին առաջին գրոհը տւեց Ձեյթունի դէմ գիշեր ժամանակ, երբ Տափրոսի առիւծները խաղաղ քուն էին մտել: Մահմեդական ֆանատիկոսութիւնը ժայթքեց. շրջակայ քաղաքներում իմամները մզկիթների բարձրութիւնից կռիւ քարոզեցին գեաւուրների դէմ... Զարդ, թաւան, տների աւերում, տաճարների սրբապղծում... Կանայք ու քահանաներ խողեսողեցին՝ երեխաները կենդանի այրեցին:

Խրախուսւած այդ առաջին աջողութիւնից՝ Ազիզ փաշան առաջ գնաց: Ձեյթունից՝ կանայք ու տղամարդիկ զինւած, համեմատաբար փոքրաթիւ՝ ամրացան իրենց անառիկ խորշերում և դարանամուտ սպասեցին բարեյաջող վայրկեանին: Վայրկեանը հասնելուն պէս՝ ազդանշանը տրւեց, և նրանք գահավէժ սլացան դէպի թշնամին: Իրարանցումը կատարեալ էր. վայրենի բաշիբօզուկները ահաբեկւած՝ փախուստ էին տալիս հայ կտրիճների առաջ: 800 հոգի ընկան թիւրքերից, պարզմի դաշտը ծածկւեց դիակներով ու վիրաւորներով, և Ազիզ փաշայի զօրքը ջախջախւած, զրկւած թնդանթներից ու դրօշակներից՝ աննսելի անկարգութեան մէջ շտապեց դէպի Մարաշ, այն ինչ զեյթունից դրօշակներով ու յաղթական երգերով վերադարձան իրենց բները: Ձեյթունը փրկւած էր:

—

Որքան տարբեր էր պատկերը Մեծ Հայաստանում... Այստեղ բռնաւորը իշխում էր դեռ իր բոլոր մղեքնութեամբ. այնտեղ Սասունը մի հատիկ օազիս էր ստրկութեան լայնատարած անապատում և միլիօնաւոր ազգաբնակչութիւնը սրտաշարժ խոնարհութեամբ քարշ էր տալիս դեռ փաշայական կամայականութիւնների լուծը:

Հինգ դար գերութիւն, և այդ ահագին տարածութեան վրայ երբէք ապստամբութեան ուկէ փորձ: Երբէք ամենաթոյլ ըմբոստութեան նշոյլ: Ո՛ր էր արդեօք այն մոգական գաւազանը, որ մի հարւածով յեղաշրջէր այդ դարաւոր, զարհուրելի իրականութիւնը... Հայը դեռ ևս նորատեաց էր, միզօնէիստ. նա դեռ հնութեան մոլեռանդ երկրպագու էր, նոյնիսկ այն անանուն բռնակալութեան, որ աղճատել էր նրա հոգին ու մարմինը. նրա մէջ դարերով մշակւել էր այն ողբալի, բացասական յատկանիշը, որ առաւել կամ նւազ չափով յատուկ է երկարատեւ բռնութեան բոլոր զոհերին և որ հոգեբանները անւանում են սովորութեան բռնակալութիւն: Հայը շատ էր ընտելացել «ոռայալի»

կացութեան և նրան փոքր իշատէ զգաստացնելու համար, նրա հոգին դէպի սուրբ ընդվզումը մղելու համար բաւական չէր սոսկ գաղափարը, բաւական չէր վերածնութեան հոսանքը: Պէտք էին նաև ուրիշ ցնցող պատճառներ: Եւ այդպիսիք եղան մի կողմից երկրի օրըստօրէ դառնացող վիճակը և միւս կողմից՝ հայերին հովանաւորելու եւրոպական միջամտութեան փորձը:

Որքան աւելի էր յօշոտում Թիւրքիան, այնքան նա աւելի էր տառապում նիւթապէս և այնքան աւելի էր ծանրանում կեղեքման սիստէմը: Երբէք այդ վերջինը չէր հասել այնքան ահաւոր չափերի, ինչպէս 70-ական թւերից սկսած, երբ Արևմտեան կեանքի ուժգին ցնցումները անդրադարձան նաև Թիւրքաց պետական օրգանիզմի վրայ: Միջխտարիզմը, որի մասին յիշատակեցինք նախորդ յօդաւածում, քաջեց իր ետևից անդիմադրելի կերպով բոլոր պետութիւններին, որոնցից Ցաճկաստանը ևս յետ մնալ չուզեց, չկարողացաւ: Մօսկովի կողմից սպառնացող մշտնջենական վտանգը կարող էր արդեօք անտարբեր թողնել սուլթաններին: Մի շարք աղետալի պատերազմներից յետոյ Թիւրքիայի առջև ցցւեց միևնոյն ճակատագրական դիվեմը, որ Ղրիմի պատերազմը դրել էր Ռուսաստանի առաջ. կամ ընկճւել ու ոչնչանալ համաշխարհային գոյամարտի կրկեսում, կամ թէ արմատապէս վերանորոգւել, աճեցնել զօրքը, աճեցնել ծովային ու ցամաքային ուժերը, բարձրացնել հետեւապէս երկրի արդիւնաբերութիւնն ու ֆինանսները: Բայց այն, ինչ որ աջողւեց համեմատաբար շարժուն ու առաջադէմ Ռուսաստանին, նոյնը մնաց ուսուպիա Թիւրքաց վեհապետների համար: Վամբի բացակայութիւնը այդտեղ զուգորդւեց ցեղական բացարձակ անկարողութեան հետ և ֆինանսները բարձրացնելու միակ ու գերագոյն միջոց յայտարարւեց աւանդական թաւանը, աւելի հրէշային չափերով, աւելի անգութ ու բարբարոս...

Հարկահանութիւնը — պաշտօնական և անպաշտօն — ընդունեց միանգամայն անօրմալ բնաւորութիւն: Ամէն մի պաշտօնեայ միահեծան տէր եղաւ իր գործունէութեան սահմաններում: Ցաճկական բիւրօկրատիան իր վաղներով, գայմագամներով ու զարթոններով դարձաւ հարստահարութեան մի հրէշային մեքենայ, և Հայաստանը — լայնարձակ թատր այդ կազմակերպւած աւագակութեան... Հայը տակաւին համբերում էր: Որքան վարժեցրել էին նրան համբերութեան ու քրիստոնէական խոնարհութեան — «անհաւատ» Թիւրքը և իր հարազատ, արիւնակից կղերը... Սակայն նոյնիսկ անբան, որոճող ստրկի համբերութիւնն էլ սահման ունի, իսկ հայը այնքան էլ գերի չէր իր ճակատագրին: Թաւանի քաղաքականութիւնը օրըստօրէ ծաւալւելով, ծանրանալով՝ բնական անհրաժեշտութեամբ առաջացրեց դժգոհութեան փրկարար հոսանքը. խուլ, տարտամ կերպով հնչեց Ցաճկահայաստանի խորքերից հայի աղիողորմ գանգատը: Հայ ինտելիգենցիան ամէն կողմից արձագանք տւեց ժողովրդի ուրբ ու հառաչանքին, և ազգային շըրջաններում տենդային կերպով սկսեց արծարծւել — դադարի կամ հրապարակաւ — հայոց րէֆորմների խնդիրը:

Հայկական շարժման երկչոտ սկզբնաւորութիւնն էր դա, նրա խաղաղ, անարիւն շըջանը: Ներսէս Աւրժապետեան գլուխ կանգնեց բարենորոգչական հոսանքին, և հայոց պատգամաւորութիւնը 1878-ին Բերլին գնալով՝ մտքեց հռչակաւոր դաշնագրի մէջ 61-րդ յօդաւածը:

Հայ ժողովրդի դժուար կացութիւնը ձեւակերպւեց Բերլինում և սրբագործւեց դիւանագիտութեան հանդիսաւոր ծանուցումով Բ. Դուռը պարտաւորում էր «անյապաղ բարենորոգումներ մտցնել հայաբնակ վիլայէթներում և ապահովել հայ ազգաբնակչութիւնը քրդերից ու չէրքէզներից»... Որպիսի՝ ցնցում, որքան վառ յոյսեր առաջ բերեց այդ յօդաւածը, թէ և «անյապաղ» բառը իր տարտամ բնաւորութեամբ վաղօրոք ծանուցանում էր արդէն խնդրի վիժումը... Այդտեղ է հայկական ճգնաժամի բանալին: Ցարին եր անցան, և 61-րդ յօդաւածը մնաց ողբալի մի ֆիկցիա: Ցոյցեր եղան — այս կամ այն պետութեան կամ հաւաքական եւրոպայի կողմից — ապարդիւն: Բերլինի դաշնագիրը փոխանակ դարձանելու հայի թշուառութեանը, աւելի ևս ծանրացրեց նրա վիճակը՝ բորբոքելով դահճի անգութութիւնը: Եւ հայաստանցին դեռ երկար սպասեց... Մարտիրոսութեան խարոյկի վրայ կապւած՝ նա իր արտասուալից աչքերն էր յառել դէպի եւրոպան և դէպի «պատարար քրիստոնեայ աշխարհը», որ 150 տարի շարունակ անողորմ մտրակը ձեռին խարազանել էր քրիստոնէութեան անարգ թշնամուն: Ի՞նչ դժբախտ: Նրա հայրենիքը բացարձակ յափշտակութեան ասպարէզ դարձաւ, նրա տունն ու տեղը աւարի մատնւեցին, նրա տաճարները սրբապղծւեցին, նրա ընտանեկան բոլոր սրբութիւնները ոտնատակ եղան, նրա որդիքը մռայլ բանտերում հոգեմաշ եղան. նա գթութիւն աղերսեց — քար ու ապառաժ մնաց աշխարհը. նա Աստուծ աղաղակեց — բայց Աստուծն էլ անզգայ էր... Եւ իսպառ լքւած, ամենադառն յուսախաբութեան մէջ, անէծքը շրթունքներին, նա դիմեց բոլոր նեղեալների վերջին ապաստանը — նա բռնեց արեան ճանապարհը...

Հայի անեղ կրիտիքական վիճակի հանգամանքին միացան գաղափարական մօճէնտները:

Ռուսահայ աշխարհում գրականութեան առաջնակարգ աստղերը՝ Պատկանեան իր սրտառուչ երգերով, Բաֆֆի իր «Խենդ»-ով ու «Վայժներ»-ով, Արծրունի իր կրակող յօդաւածներով բորբոքում էին հայրենասիրութեան տենդը և անդադար հնչեցնում նւիրական կոչը՝ «Դէպի Հայաստան»...

Հայ երիտասարդութիւնը ալէկոծւում էր: Արարատեան աշխարհից մինջև վան ու էրզրում տարածւում էր մտքերի այն փրկարար խմորումը, որ նախանշանն է յեղափոխական շարժման: Անմոռանալի օրեր էին: Վարդագոյն յոյսերի, անհուն, մասսային խանդավառութեան օրեր: Իդէալի իրականացումը այնքան մօտ էր թւում... Եւ շարան-շարան հրապարակ իջան ինտելիգենտ և ժողովրդական գործիչներ՝ վառելու ազատութեան մեծ հրդեհը, որ պիտի հալեցնէր, լափէր ստրկի ամրակուռ շղթաները:

Երիտասարդ Հայաստանն էր դա: Գաղափարական վտեմ թռիչքների, ազատ մտքի և ասպետական զգացմունքի Հայաստանը: Սուլալ չէր ազատութեան մարանջողների բանակը, բայց մեծ էր հաւատը, ուժեղ էր իդէալի հրապոյրը: Վառու տարրերը ինքնաբերաբար ծնունդ էին առնում տանջանքի աշխարհում — իրարից անկախ, ցիր-ցան վիճակի մէջ: Յեղափոխական կազմակերպութիւնը եկաւ ի մի ձուլելու նրանց: Դժուարին պարտականութիւն: Այնուամենայնիւ նա կատարեց իր պարտքը, անդուլ մաքառելով արտաքին ու ներքին թշնամիների

դէմ մի բացառիկ, դժոխային միջավայրում, շրջապատւած ամէն կողմից մարդակերներով: Ցասը տարւայ ընթացքում, շնայած անօրինակ խոչընդոտներին, հայ յեղափոխական շարժումը ունեցաւ փառահեղ արտայայտութիւններ: Որքան հրաշալի տիպարներ արիւնթեան ու անձնուրացութեան և որքան խիզախ, դիւցազնական կռիւներ: Որպիսի՜ անդունդ, որպիսի ցայտուն կօնտրաստ «Պառաւ» ու Երիտասարդ Հայաստանի միջև...

Եղան վայրկեաններ — գող, շառաչալից — մահաւան պայքարի այդ տասնամեակում, երբ նոյնիսկ այդ պառաւ, զառամեալ Հայաստանը հանդէպ իր զաւակների հերոսութեան և եւրօպական փութկոտ միջամտութեան՝ փառաբանում էր ու սիրով գրկում յեղափոխութեան գաղափարը. թշնամին սոսկում էր «հայայի» անվեհեր թուիչքներից՝ մարտական մի սառսուռ էր անցնում հայութեան ջղերով, և նա հպարտ էր... Բայց անցան այդ հանդիսաւոր վայրկեանները... Եւրօպան սպառնաց ու չխաժնեց: Անգլո-ռուսական հակամարտութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Լօբանով յայտարարեց բացարձակ ձեռնպահութիւն և խրախուսեց հայերի դաժին: Ֆրանսիան համակերպեց Լօբանովին: Միւս պետութիւնները նոյնպէս ձեռնպահ մնացին: Անգլիան չխիզախեց միայնակ միջամտել: Մայիսեան ծրագիրն էլ (1895-ի) քնեց. բոլոր խոստումները մնացին խոստում: Դրա փոխարէն առաջ եկաւ հայութեան անվերջ մարտիրոսութիւնը և հայի հայրենիքը դարձաւ արեան ծով... Սուլթանը քաջալերւած՝ առաջ տարեց հայալինջ քաղաքականութիւնը և ուժգին մի հարւածով ուղեց ջախջախել հայութիւնը ու խաչ դնել հայկական հարցի վրայ: Բայց դա պատրանք էր: Վերաւոր հսկան նորից կազդուրւում է ու նորից արձանանում իր հակառակորդի դէմ: Վրէժի ու ատելութեան ամբարւած թոյնը ելք է որոնում, և շատ չի անցնի, երբ նա յաղթական մի սլացքով՝ կը յաջողէ՝ հակառակ տաճկի հայասպան ջանքերին, հակառակ եւրօպական ձեռնպահութեան և «ԱՄՆԱՏ»-ի ծանուցումներին — վերջ դնել վայրենի, հօրդայական վարչութեանը և արեան ու սարսափների հայրենիքում սկսել մի նոր դարագլուխ...

Զ Ե Յ Թ Ո Ւ Ն Ի Ա Ս Տ Ղ Ը

Ձեռքերս ծոցս, աչքերս երկինք,
Լուսամտիս մօտ, տխուր, յուսաբեկ,
Նստած կը դիտեմ հորիզոն հեռի...
Որ բոցերու մէջ կայրի, կը վառի:
Ա՛հ, ի՛նչ է այդ բոց, ո՛ւրկէ կը ժայթքի:
Արեւին ճաճանչք, վերջալոյս կ'ընկճի,
Պ'պրողէ կապոյտ երկինքը պայծառ,
Հորիզոն կամար կը ձուլէ իրար,
Նժդեհի աչքէն արցունք կը քաղէ,
Աքսորւած սրտէն արիւն կը քամէ:
Հայաստանն է այդ, հայրենիք անբախտ,
Հայու բունն է որ կ'ընեն քարուքանդ:

Բայց հոգուս անհուն, սև անյուսնութիւն,
Կը վանէ իսկոյն կայծ մը պլպլուն,
Որ հեռուն մռայլ, անհունութեան խոր

Կը ցոյայ մերթ վառ, մերթ աղօտ, պղտոր:
Բայց ի՛նչ է այդ կայծ,
Որ սև, մթազգած
Թուխպերուն հանդէպ
Կուելով սոէպ՝
Ճգնի լայն, արձակ
Եթերի մէջին,
Ազատ, համարձակ
Հողալ իւր կարգին.
Յոյց տալ աշխարհին,
Որ չ'ուզեր յաւէտ
Ի ծոց խաւարին
Շիջանել անհետ:

Տանն Ռուբինեանց
Աստղն է այդ կայծ,
Որ դարերէ ի վեր գարշ մթնոլորտում
Գերի կը հիւծէր, մօտ էր իր ընկճում:
Բայց յանկարծ օր մը սթափեց Զէյթուն,
Պարզեց կարմիր դրօշ իր հպարտ գլխուն:
Սուրբ ուխտը ըրաւ վրէժխնդրութեան,
Օրինակ տալով խրոխտ քաջութեան:
Ամսներ անդուլ կուեց անվատ,
Մէկի տեղ հարիւր շրջեց «ի դրախտ»:
Այդպէս խորտակեց դարաւոր կապանք,
Այդպէս ազատեց հայուն պատիւ, փառք...

Յայնժամ Զէյթունցին հպարտ, մեծազօր,
Արձակ-համարձակ ճախերը սար ու ձոր
Երգելով զւարթ ազատ կեանք կամ մահ
Կը յիշէր զոհերու յիշատակն անմահ:

ԱՍՏԻԿ

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ե Ո Ւ Ր Զ Ը

ԱՐԹՈՒՆ ՓԱՇԱՅԻ ՄԱՀԸ. — Արթին փաշան ալ հողը դրին:
Վերջի տարիներս ազգային գործերու մասնակցութիւնը
ուղղակի սուլթան համդի խորհրդով իր հեղինակաւորութիւնը
ազգի կամքին ժայռին զարնելու յանդուժն ու փառասէր փորձը,
կը թելադրէ մեզ ըսել քանի մը խօսք անոր մահուան առթիւ
ու քննադատել իր անունը յեղափոխական պողպատով:

Արթին փաշայի մահը ազգային սուգի մը հանդիսաւորութիւնը
չէ կարող ունենալ զի իր պաշտօնին քերութիւն, շատոնց արդէն
ապահարզան ըրած էր ազգային գործերու օգտակար մասնակցութեան
ու իբրեւ դիւանագէտ «պետական պատմաբան» բոլորովին օտար
չէր անոր սրտին վրայ ազդել:

Կրնանք ըսել թէ Արթին փաշան քիչ շատ կը պատկանէր
48-ի ազատամիտ եւ ազատասէր սերունդին, որոնք տեսած ու
մտիկ ըրած էին Միշէն, Կիզօն, Լամարթինը, չիւլօն, որոնք
ըստ Օտեմանի «Լաստաւաճանէին» խօսքը: Այդ դարու իտէա-
լական մարտը հոսանքին մէջ մկրտած սերունդն էր որ, վերա-
դարձին Պօլիս, ազգային սահմանադրութիւնը դարձնեց այնքան
ճարպիկ, որքան կորովի ձեռքերով, եւ այսպէս ընտառաւորեց
տական կառավարութեան մը մէջ, ազգային վարչական ուսմ-
կավար առանձնաշնորհում մը հաստատեց, ազգին պարգեւելով
նախաձեռնութեան ոգիի եւ ինքնագիտակցութեան առաջին քայլերը:
Ազգային սահմանադրութիւնը որ քառակուսի անիւներով կառք
մըն էր թիւրք պետութեան աչքին — կը պարունակէր բարի սերմը.
Ծիգերու նախադրումն էր: Անոր զծած ակօսներուն մէջ ձեռնա-
ծաղկեցաւ հայրենասիրական գրականութիւն մը, որ քառակուսի
սահմանադրութեան լծած ամբողջ ազգը, լաւատես ծախատարի
մը մղումով ու ընազդով կը հրէր որոշ եւ վստահ նպատակի մը:

Այդ տարօրոշակօրէն սքանչելի սերունդն մարդ չէ մտացած.
փակւած է այլեւս այդ հերոսական եւ վառվառն բողբոջընդուն

որ, որ տուաւ ազգին եւ պետութեան այնքան աւանաւոր անմասնորոշիւններ եւ որոնք կրցան, պետութեան ծառայելով հանդերձ, ազգին ապագայով ալ շահագրգռուի եւ իրենց բոլոր ժէստերուն, մտածումներուն մէջ հայրենասիրական խազ մը դնել:

Պէշիկեշեան այդ ժամանակի պատկաւոր կամ ճիշդը ազգային բանաստեղծն էր, որ ոգեւորած այդ սերունդի իտէալական միջոցաւ, կը քնարերգէր «Հայրենեաց հովիւը», «Հայրենեաց թռչնիկը», «Մահ քաջորդունը»:

Հետաւոր ու սրբազան յիշատակն է որ կը մնայ մեզի այդ ժիր եւ տարարին հիններէն, որոնք գիտակցութիւնը դրին մեր հոգիին մէջ եւ մեր շնորհուն տւին անդրադարձ գործողութեան վարժութիւնը:

Արթին փաշան այդ սերունդին վերջինն էր, բայց չենք կրնար ըսել իրին համար *last but not least* — վերջինը բայց ոչ փոքրագոյնը, որովհետեւ համեմատելով Օտեմանի, Ռուսիանի, Սերմիշի եւ ուրիշ համակրելի դէմքերու հետ, շատ փոքր կը մնայ անոնցմէ: Դիւանագիտական ցուրտ պարագլուխներէ, լեզուի երկդիմութիւններէ, ցամքած սիրտ մը, իր գործերուն մէջ չէր կրնար դնել այն թռչնը եւ ոչ ալ կրնար լարել ազգային աղիւղը ինչպէս մարգարէական Ժերմանը:

Իր ընտրած ասպարէզը կը պահանջէր արդէն ազգային զգացումէն մեծ գոհողութիւն մը ընել իր փառասիրական վերելքին մէջ, եւ աւելի երեսպաշտ ըլլալ: Իր բոլոր սէրը, ծգողութիւնը դէպի հայ ազգը կը կայանար իր գերդաստանին աւանդական եկեղեցիաւորութեան, դպրոցասիրութեան մէջ, նախամախնդիր չէին ու պայծառ մնասի՝, խաշմամբոյններու, խաշմանքիսներու եւ ուխտագնացութիւններու:

Ներքէս պատրիարքի օրով, ունեցաւ կ'ըսեն, թաքուն դիր մը, գուցէ պատկառելով մեծ պատրիարքին հմայքէն: Ազգային գործերու պատահական հետաքրքրութենէն զատ կամ իբր աւելորդ պէշանք մը իր թիւրք պաշտօնէութեան հալախն վրայ, Արթին փաշան, Տատեանց գերդաստանին օսմանեան գահուն աւանդական հաւատարմութեան հետեւելով, հաւատարեաններու հրամանատարին, ինչպէս մեռել լոգնողի մը, ծնողին մէջ, կարելի է ըսել, չդիակ՝ մըն էր:

Տատեանց գերդաստանը, որուն վերջին աղօթափայլ ներկայացուցիչն էր Արթին փաշան, Անիէն եկած էր: Տատեանց սմալախն անթիւ ծառայութիւնները յայտնի են օսմանեան գահուն: Բայց այն քաղաքը, որ թիւրք պատմութեան այնքան բարեբաւեր ծնած է, չի խնայեցաւ ապերախտութեան ծեղը բռնած արիւն-նուշտ եւթաղանէն:

Արթին փաշան, միտած իր մէջ սրբազան որդը, դատաւար-տելի խոհեմութիւնով մը իր դիւանագիտական բոլոր ուժը եւ ծարպիկութիւնը գործածեց փրկելու ոճրագործ ծեղը: Իր աշակ-ցութիւնովն էր որ սուլթան համիդ շահաց խեղդել հայաստանի արիւնի բողբոջը:

Արտաքին գործերու մ'իւս թէ շարքը ազգին համար թոյլ խորտակած կամք մըն էր, սկեպտիկ եւ վաստակաբեկ: Չը թողնուց ոչ մէկ շօշափելի յիշատակ իր ազգակիցներուն. իր հայրը հայաստանի պատմական աշխարհագրութիւնը փորագրել տւած, ազգին կորուսած փառքերը վերականգնանացուցած էր, որդին սեւ շքանակ մը անցուց այդ յիշատակին բողբոջը:

1898-ին, ի՞նչ թէ սուլթանի նախածնունդութիւնով, յեղափոխական Դաշնակցութեան հետ բանակցութեան միտաւ, որպէս զի ազգին եւ փառիշահին միջեւ *modus vivendi* մը հաստատուի:

Արթին փաշան կ'ուզէր, ինչ ալ ըլլայ, յաջողցնել սուլթանին ծրագիրը, մանաւանդ որ ան ժամանակները, խուլ եւ անասակ մըցում մը կար կարգ մը դիրք ունեցող ու շունեցող հայերու մէջ, սուլթանին բարձրագոյն շնորհին արժանանալու: Տեսակ մը զաղտնի ընկերութիւններ կազմած էին թիւրք եւ հայ միասին, սուլթանին սարսափը շահագործելու համար: Արթին փաշան, Գալատակ միւսներուն, ուղղակի Դաշնակցութեան դիմեց, իր մեծագոյն կուսակցութիւնը: Բաղադրական ժողովի ատենապետութիւնը տեսակ մը անշահախնդրութեան երեւոյթը կուտար իր թատերասարածին:

Իր թղթակցութիւններուն մէջ, որոնք ոչինչ կը խոստանան եւ շատ քան կը պահանջեն, կը ջանայ համոզել, խրատել Դաշնակցութիւնը, որ հանդարտ մնայ, իսկ ինք պիտի աշխատէր «բանտարկելոց եւ քսողիւց ազատութիւն փրցնել» սուլթանէն «շնորհիւ ազգին հանդարտ վարքին եւ հայ քաջութիւններուն խոհեմ ու ազգասիրական ընթացքին»:

Չենք կարծիք որ Արթին փաշան Դաշնակցութիւնը իր կառքին լծելու ծիծաղելի յաւանդութիւնը ունեցած ըլլար, բայց սրտանց կը բաղձար, որ յեղափոխական Դաշնակցութիւնը սուլթանին նկատմամբ լու տրամադրած փաղաքական նամակ մը գրէր իրեն: «Օր ու գիշեր կ'աշխատիմ, կ'ըսէր, ազգը սուլթանին հետ հաշտեցնելու համար», կամ ուրիշ խօսքով կը փորձէր սուլթան համիդի դեմքը հանել:

Բացարձակապէս վիժեցին բանակցութիւնները: Դաշնակցութիւնը իր սկզբունքին մէջ անյողողող մնաց մինչեւ վերջ, զգալով որ փաշան գիտակից կամ անգէտ միակողմանի գործիք մըն էր սուլթանի համին կողմէ շահի խընի մը ծեղը: Իսկ շար լեզու-նեք կը փսփսային արդէն որ փաշան դրամի նեղն է: Բանակցութիւններուն հետ կը շարունակէին շարքերը, որոնց համեմատ փաշան իր նամակներուն կուտար ծիծաղուն եւ հակակշռող ոճ մը, տարտամ եւ թէական խոստումներով որոնց առջեւ կարելի էր հարցանել շարել հին մարդու մը քարի խրատներով ու պաղատանքներով — միշտ խոյս տալով անմահական երաշխաւորութենէ, որոնք ազնիւ դատի մը ծառայող մարդոց համար միամիտ եւ անհմատուն կը թւին միանգամայն: Արթին փաշան կը ջանար «նախկին յարաբերութիւնները» վերահաստատել, արօրը յեղափոխական լուծքին առջեւ փոխադրելով: Ինք, որ ցաւազին յուսահատութիւնով մը կ'ըսէր, «ապրած ըլլալով թիւրքերուն մէջ, զիտեմ սէրային ծակուծուկը, մ'իստէրք...» չէինք հասկնար թէ ինչպէս հնար էր քաջամբ վիճը լեցնել այդքան հեշտ կերպով: Սուլթանի համիդ, որ յաջողեցաւ ամբողջ երիտասարդ թիւրքերու կուսակցութիւնները վարկաբեկել, զանոնք անպատիւ միջոցներով դասալիք ընելով ինչպէս իրաւացիօրէն կ'ողբան ու կ'տիտոսան այսօր բանիմաց թիւրքերը նոյնը աշխատեցաւ ընել հայերու համար: Փաշան, իր ըսելով, փառասիրական կամ շահու դիտումով չէր որ այդ ապերախտ «պարկեշտ միջոցողի» դերը ստանձնած էր, այլ իր աւելորդ մօրուքի փորձառութիւնը, իր... ազգին սէրը կը մղէր զինքը: Կը գանգատէր եւ կը վշտանար նոյնիսկ որ Դաշնակցութիւնը շատ անողոք եւ խստապահանջ էր «հաւասարէ հաւասար կ'ուզէր բանակցել սուլթանին հետ» կ'ըսէր:

Եթէ ծերունի փաշան Դաշնակցութեան կամքին առջեւ զինա-թափ եղաւ, չկրնալով իր «ազգասիրական» իղծերը իրագործել, ոչինչ կըցաւ ընել նաեւ քաղաքական ժողովի ատենապետութեան պաշտօնին մէջ: Կ'ըսաւսէր որ «հրաշալի կանխդէմ», ըլլար այդ շար ժողովին, որու անդամները տեսակ մը մարդամեքենաներ դարձած էին: Խորտիկալն եղաւ անոր: Արթին փաշա եւ Օրմանեան — վերջինը սիրուն ոսկոր մը չէր առնինին համար — երկու ամուլ սիրահարներ եղան, երկու տարբեր ուղղու-թիւնով, մէկը *raison d'Etat* — ի սկզբունքին վակիւտած՝ ահաբեկելով վարչութիւնն անդամները, միւսը աստաճաքանական «թախտոտ բեկրութեան» ու բանդազուշանքին մէջ գալիք փառքեր որոճա-ւով եւ նեպոտիսթեան ճիգովիական ախտը մոցնելով պատ-րիարքարանի մէջ: Ոչ մէկը ոչ միւսը չեղաւ պատրիարքարանի «քարի ոգին»:

Չենք կարծիք, սակայն, որ սուլթանը սիրէր այդ մարդը — որուն դէմը թէեւ թրքական կաղապար ստացած էր — ինչ-պես չսիրէր ամէն հայ: Իր քթամոտեմեանը մէջ, որ եղեռ-նագործութենէն ուրիշ քան չգիտէր, կը քանցնէր անոր մտքի հանրը որուն միշտ կարօտ էր, ատոր համար Արթին փաշան վերապրեցաւ այնքան նախարարական նաւաբեկութիւններէ ետքը, ոսկեգօծելով շարագործ խալիֆայի մտքի պարապութիւնը:

Հակառակ իր տաղանդին ու կարողութեան չի հասաւ իր ասպարէզին ծայրը, չկրցաւ արտաքին գործերու նախարարու-թեան քաջութիւնը հաջնել, զի կեանքը էր ինք. պարզ խորհրդական եւ քարտուղար մնաց, թէեւ «քանհինգ տարւայ մէջ, կ'ըսէ ուսական թերթ մը, չէ եղած արտաքին խնդիր մը կամ պաշտօնաթուղթ մը, որ Արթին փաշայի ծնողին անցած, կամ անոր խորհուրդը առնած չ'ըլլայ»: Հիանալի գիտէր դիւ-նագիտական ոճի նրբութիւնները, այնպէս որ արտաքին գործերու դիւանատան մէջ իր ծնողին տակ քաւական աշակերտներ մարդ եղան:

Անուրը ու անհրապէս եղաւ իր կեանքը. մեծ աղմուկ կը հանէր անուշտ եթէ թիւրք մը եղած ըլլար: Հազիւ գերեզմանին վրայ «հայհապարհեմ» վերջացած, թիւրքերը շուտով մոռցան անոր ծառայութիւնը եւ անունը, ինչպէս չեն ծանօնար Գալէզ Ամի-րայի անունը: Կեանքը մը, այն, պէտք է ծառայէ փառիշահ-ներուն — մտալով միշտ ստորուկ — բայց պէտք չէ անմահանայ: Անյիշատար հայ ժողովուրդը պիտի պահէ նորէն անոնց յիշա-տակը, իր սրտին ու պատմութեան մէջ անկիւն մը — գուցէ լուազոյն տեղը — շնորհելով այդ խորթ զաւակներուն, ան փա-ռաւոր մահներուն քով, որոնք ազգին հոգին մարմնացուցած են: Յակոբ փաշան ողջութեւն ելեւմտական մեծ ծառայութիւն ըրաւ օսմանեան գահուն, մանաւանդ սուլթանի անմահական գանձուն, որ ոչ մէկ թիւրք կ'ընէր. իր ժառանգները, եթէ չենք սխալիր, Պօլսոյ ժամերէն մէկուն ծանրագին շուրջառ մը չինել տւին: Ահա մահավերջիկ երախտիքը որ ըրաւ այդ մարդը իր ազգին եւ սակայն հայ ժողովուրդի պանթէօնին մէջ... ան ալ տեղ ունի:

Մեր ազգային ցաւերուն ու իրաւունքներուն ոստի ունեցած ենք պետութեան հայ ծառայողները, որոնք գոյութիւնը թշա-ւաբեր է մեզի համար: Նուրբան, Սէֆէրեան, սատկելու Բարդուղիմէոսը, որուն օրհնութիւնը սեւ անէճքի կը փոխել, եւ բոլոր

պաշտօնական ջոխրքը, զանազան անխոստովանելի շահերով դէմ են ազգային ունէ շարժման: Ենթադրութեամբ մէջ երբեմն ծայններ քարժեցան խառնակութիւն մը քարոզելու կամ անավարժութիւն մը հաստատելու այդ դասակարգին դէմ, որոնք իրենց խելքով եւ ոչ արհամարհելի ժիւղով, կը ծանրացնեն մարդասպան քաղաքական իրենց դժբախտ հայրենակիցներուն գլխուն վրայ: Բոլորովին անհիմն չէր այդ արհեստ միտքը, զի տեսանք այդ պաշտօնական մարմինն տխուր ու քաջասական դերը ազգային ճղգնաժամուն, որոնք չարք գործածեցին իրենց հաւատարմութիւնը: Անոնց... անմահութիւնը մեր մասն է: Ամէն անգամ երբ փրկած տանձի պէս կ'իյնայ անոնցմէ մին կը քաջագանդենք:

Felix opportunitate mortis.

«Բարեպատեհ մահեր, որոնք մեր ակամայ շարահիմնութիւնը կը գրգռեն:

Արթին փաշա իր փառասիրութեամբ մէջ յուսահաք մտաւ, օսմանն ան գահուն գնահատելի ծառայութիւններ եւ ազգին պատուական ու թատերական ցոյցեր միայն ընելէ ետք: Չենք համարձակիր ըսել ինչպէս քերամներ վրայ գնաց ըսելու Նուբար փաշայի մասին թէ իր ազգին կակիճէն մտաւ:

Իր միօրինակ կեանքը չի ներշնչեր ուր սերունդին ան սրտոտ խանդավառութիւնը, չի ցուցներ ան թափանցուն հմայքը եւ չարտայայտեր ան հանգուշ իտէպակամութիւնը, որ ունեցան իր ժամանակակից դէմքերէն շատեր, սահմանադրական գործիչները «անկշռելի» են մեծ հաւատացողները:

Արթին փաշան ունէր թերեւս քարեցակամ տրամադրութիւններ դէպի ազգը, առանց այն լքութեամբ, զոր ունէին շատերը գուցէ զոհ մըն էր դիւանագիտական «կուռք»-ին, որուն անսիրտ նկատումներուն առջեւ ստիպւած էր իր սիրտը գլխուն մէջ կրելու, պարզ հանդիսատես ըլլալով ազգային յուզումին ու խռովքին:

Թերեւս մինչեւ իսկ հանրային խղճին առջեւ իր դատաւարութիւնը մեղմացուցիչ պարագանք գտնէ, քայքայ պատմութեան էջերուն մէջ յաւէտ սեւեռուն պիտի մնայ սա մտատանջող դատաւարիքը, Արթին փաշայի նախարարութեան օրով, սուլթան Համիդ, ոճրագործութեան Մոզորը, Հայաստանի մէջ չսլած շտեմնած ոճիրները գործեց...

Փափաքելի էր որ իր մահը աղուր օրուայ մը վերջալոյսը եղած ըլլար, իր թշառ ազգէն անմահանալէ առաջ...

Թշառութեան ըովին մէջ ազնւացած ամբողջ ազգի մը սրտաշարժ վեհանճարութիւնով ըսենք դարձեալ իր գերեզմանին առջեւ. չողը թեթեւ գայ վրան...

ՓՐԱՆՍԱ ԵՒ ԹԻԻՐԻԱ. Փրանսո-թիւրք վեճը եւ միջադէպը, հետեւանք Փրանսայի քանի մը հպատակներու Թիւրքիայէն առնելիքին եւ Փրանսայի ազդեցութեան Արեւելքի մէջ խառնելուն խաղաղած է այժմ: Բիշ օրէն Գոնստան եւ Միւնիք պէյ կը վերադառնան իրենց պաշտօնատեղիները:

Սուլթանը, որուն արիւնոտ երեսը միշտ փայփայանքներ վայելած է դարավերջիկ վեհագետներէ, առաջնորդ արհամարեց Փրանսայի պահանջները, յուսալով որ շարաշահ պետութիւններ պիտի վահանեն զինքը: Օգտուելով միջազգային անորոշ դրութենէն, Փրանսան առիթ սեպեց վերահաստատել Արեւելքի մէջ իր պատիւը եւ համբաւը, որուն վրայ գերման արծիւը իր շրթը ձգած էր: Սուլթանի ժպիտութեամբ եւ յամառութեամբ վրայ Փրանսական նաւատորմի շոյիմքեր Ե-ին առանց դիմադրութեան գրաւեց Միտիլինէ կղզին, մինչեւ որ մարդասպան խալիֆան Փրանսայի պահանջներուն գոհացում տար. ինչպէս թիւակին-Լօրանտօյի աննելիքներէն զատ, Թիւրքիոյ մէջ Փրանսայի պաշտպանութեան տակ եղած քարեգործական հաստատութեանց եւ դպրոցներու օրէնքով ծանցելիք են, վերջապէս յարգել կապիտիւլաւատիոնով ձեռք բերած Փրանսայի դարաւոր իրաւունքները:

Առած է որ սուլթանը ծեծով խօսք կը լսէ: Փրանսան ընդ ուժը գործ դրաւ, *ultima ratio*-ն, որ քաղաքականութեան վերջին խօսքն է ըստ Ռիշլիէօի:

Սուլթանը, լսածին Միտիլինէի առումը, ամա՜ն, ըսաւ Փրանսայի եւ անոր պահանջներուն լիովին գոհացում տուաւ ժամը ժամին:

Սուլթանի սեւ օրին ոչ որ տէր եղաւ: Գիյօմ մերժեց միջամտել թէեւ իր տղան այդ ըրալէին Պօլիս դրկած էր Ալլահի շուքէն աւար բերելու համար:

Նոյն պահուն յունական տորմիզը սուլթանի հրամանով կ'այցնէր օսմանն ան նաւահանգիստները Էգեան ծովուն մէջ: Իզմիր այցելէր հոնի յոյները «գլխօններով» ողջունեցին, իրենց խօսքով հեղինակ «սուրբ նաւատորմիզը», որ հեղինակամութեան մեծ ապագան ունէր իր կողերուն մէջ:

Հայոց շարձեցուն, Եւրօպայի կոնսլերտը անգոր եղաւ քան մը ընել սուլթանի դէմ: Գերմանիան կը հրաժարէր իր սրինգը անձի: Փրանսան իր ձեռնբերեցութիւնով եւ իր հաշիւը սուլ

թանին հետ առանձին կարգադրելու յանդուգն քայլով նախընթաց մը կըստեղծէր Եւրօպայի եւ Թիւրքիոյ յարաբերութիւններու մէջ: Սուլթանը որուն ուժը Եւրօպայի անհամարաշխ համաձայնութիւնն էր ասկէ ետքը պատասխանատու դիւրքի մէջ կ'իյնայ առանձին առանձին պետութիւններու հանդէպ, այնպէս որ այն միջամտութիւնը՝ արեւելեան հարցին միջ զգալի յեղաշրջում մը առաջ կը բերէ, քարացած աւանդութիւն մըն է որ կը ժամի: Փրանսան իր քայլով, որուն մարդասիրական սուներ մըն ալ տւին, ամբողջ աշխարհի «պրափօ»-ին արժանացաւ, թէեւ վերջը շարդարացուց նախըզանքը:

Փրանսայի գոհացումը որքան պատրանքներ ունի իր մէջ, յետոյ տեսնելի գուցէ, զի Թիւրքերը աւելի թշնամի պիտի ըլլան այժմ՝ քան երբէք:

Սուլթան, իբր ցած անասուն, լաւ գիտէ թէ ինչ արժէ իր խոստումը: Լուր կայ որ — ի վրէժ անշուշտ — երբեակ դաշնակցութեան գող կուզէ նետել, ըսելով Գիյօմին, ինչ որ կըսէր Էլօիզ Ապէլարին:

«Համբուրէ գիս, մտացածը կը հասկնամ»...

Համիդապետեան հրաշալի խալիֆան իրաւ Թիւրքի գլուխ ունի...

ՄԱՄՈՒԷԻ ՏԵՍՈՒԹԻԻՆ

Տաղանդաւոր հրապարակախօս Իւրբէն Գոհիէ իր «Հայաստան» վերնագրով յօդւածի մէջ (Աւրօր 8 հօկտ.) հետեւեալն է գրում.

... Տարնապնդի եւ աղետների ծայրայեղութիւնից, երկարատեւ սարսափից, յուսահատութիւնից երկշտ դարձած հայերը դիւանագիտութեան վրայ են դրել իրենց յոյսերը: Դիւանագիտութիւնը, իբրեւ պահպանողական շահերի եւ կառավարութիւնների գործակաւար՝ անհրաժեշտաբար թշնամի է նրանց: Որպէս զի դիւանագիտութիւնը նրանցից միամտօրէն սպասւած միջամտութիւնը անէ, պէտք է որ եւրօպական կառավարութիւնները նեղը ձգեն մի կարգ դէպքերով:

Նրանք, որոնց չափը պահանջում է այդ, նրանց պարտքն է՝ առաջ բերել այդ դէպքերը:

Ի է պքերը գրգռելու համար, ինչ որ էլ լինին նրանք, դրամ է հարկաւոր միշտ:

Այսօր դրամ է պէտք Ասիայում՝ զինելու համար հայ ազգի մնացորդները, որոնք վճռել են պաշտպանել իրենց, որպէս զի վրէժխնդիր լինեն նահատակւածների համար, դրամ է պէտք, որպէս զի քաշերին միջոց տրւի ծառայելու իրենց ժողովրդի եւ բոլոր ժողովուրդների դատին:

Անգլիայի Գերմանիայի եւ ուրիշ տեղերի զէնքի եւ ռազմամթերքի գործարանատէրերը կարող են միշտ ամենալաւ հրացաններ եւ անհամար փամփուշտներ անցկացնել բոլոր մաքսատների եւ ոստիկանութիւնների միջից, եթէ բաւարար չափ ապահովել նրանց:

Դրամ, չատ դրամ — այդտեղ է ամէն բան:

Աշխարհիս երեսին հայեր կան, որոնց մօտ փողը չէ, որ պակասում է, որոնք խեղդւած են փողի մէջ: Նրանք ծախսում են հաղարներով, երբեմն միլիոններով՝ երաժշտութիւն, նկարչութիւն կամ բժշկութիւն սովորեցնելու երկրից վտարւած երիտասարդներին, կամ մի քանի դպրոցներ պահելու, եկեղեցիներ կառուցանելու... Որքան պարտաւոր տեղը չալլւած ոսկիներ, որոնք կարող էին այնքան բարիք ծնել...

Այն հայ կապիտալիստները, որոնք չեն ուզում հասկանալ այդ, պէտք է, որ նրանց կորովի հայրենակիցները համոզեն նրանց ունէ փաստի միջոցով... Հայ ժողովուրդը փրկելու իրենց բոլոր պարտքը չկատարելով՝ նրանք համարեայ կորալայնապաշտութեան յանցանք են գործում... Ի սէր իրենց անձնական հանգրստութեան՝ նրանք կատարում են միւլենոյն ոճիրը, ինչ որ Յիւլիքս Յօրները, Հանօթօնները գործում են իսէր օսմանեան ոսկիների:

Առանձին ուշադրութեան արժանի է ժառանգութեան օրենսդրութիւնը (La Petite République 7 նոյ.)

Մի բան, որ լաւ հասկանալի չէ պ. Դելկասէի ճառի եւ քաղաքականութեան մէջ — ասում է հռչակաւոր տրիբունը — այդ այն է, որ նա հնարաւոր է կարծում զատել հայկական խնդիրը արեւելեան խնդրի ամբողջութիւնից. . . Ի՞նչպէս պ միմիտոր չնախատեսաւ, որ Հայաստանի հարցը կարող էր հրապարակ զալ այդ (ֆրանս-թիւրքական) ընդհարումի միջոցին. . .

Անկարելի է, որ հայերը չընդունին Ֆրանսիայի այդ կորովի ընթացքը իրենց մէջ խոստում, մէկ երաշխաւորութիւն՝ նրանք ուրեմն այսուհետեւ աւելի անհամբեր պիտի լինին դարչելի լծի տակ։ Եւ եթէ չնորհւ Ֆրանս-թիւրքական ընդհարումին՝ նրանց պահանջները աւելի զօրեղ ու ազդեցիկ երաշխարանք ընդունին, եթէ նրանք աւելի ուժգնօրէն կոչ անեն Եւրոպային եւ նոյնիսկ Ֆրանսիային, որ Բերլինի դաշնաւորը անդադար զրգուում, խախտում է, Ֆրանսիան թող պիտի տայ արդիօք սուլթանին ճնշել ու խեղդել սրիան մէջ մի արգարացի շարժում, որ նա, ուղի-չուզի, պիտի քաջալերէ։ Դա կը լինէր մի ճշմարիտ ոճիր։

Ի՞նչ միջոցներ է ձեռք առել պ. Դելկասէ, որպէս զի Հայաստանը չմասնուի դիւանագիտական մութ կոմբինացիաների։ Ահաւասիկ ճշմարտութիւն հրատապ կէտը. . .

Բայց աւելի քան յուզիչ ու ծանր կը լինէր, եթէ պ. Դելկասէ Ռուսաստանին միայն թողնէր հայկական խնդրի սնորհիւթիւնը. . . Մենք արդէն դիտէինք, որ Ռուսաստանը փորձում է օգտուել ներկայ հանգամանքներին եւ տարածել Հայաստանի վրայ մի անսակ մի-նաշնորհեալ հովանաւորութիւն։

Ռուսաստանը թիւրքերին էր յանձնել հոգսը՝ ազատելու նրան ամենաառնական հայ տարրերից եւ այժմ փորձում է սահնցել իր ազդեցութիւնը հայ ժողովրդի մէջ, որ թուլացած է կոտորածներից եւ յոգնած Եւրոպայի երկարատեւ անուշադրութիւնից։

Իշխան Լօրանօվին համակերպելու համար՝ Հանօտոն մասնեց հայերին թիւրքական դանակին Լօրանօվի յետնորդին համակերպելով Դելկասէն պիտի մասնէ՞ արդիօք հայերին Ռուսաստանի միայնակ հովանաւորութեանը։

Պ. Դելկասէ իրաւունք չունի ասելու. «Այս խնդիրը Ռուսիային է պատկանում»։ Ոչ. նա պատկանում է Եւրոպային, որի մասն է Ֆրանսիան։

Դ' է տ ու ը Ն Ե Լ Դ Ե Վ օ Ն ս տ ա ն, Ֆրանսիայի նախկին պատերազմ ԼաՏէի համաժողովի մէջ, զետեղել է Temps լրագրում մի ուշադրաւ յօդած «Սուլթանը եւ ԼաՏէի իրաւարար ատեանը» վերնագրով, որ աւելորդ չենք սեպում քաղածօրէն առաջ բերել այստեղ։ Պ. Դ'էտտընէի խաղաղասէր բարեկամները հարցնում են նրան՝ ինչու արգեօք Ֆրանս-թիւրքական վէճը չի կարելի յանձնել վերոյիշեալ ատեանին։ Եւ պատկառելի իրաւագէտը, որ ստիպւած է չափաւոր տօն գործ ածել մանաւանդ Temps-ի պէս կիսապաշտօնական օրգանում՝ հետեւեալ պատասխանն է տալիս։

«Մեր վէճը սուլթանի հետ չպէտք է յանձնուի եւ չէ կարող յանձնուել իրաւարար Ատեանին։ Իրաւարար դատաստանը ընդունելի կը լինէր, եթէ մենք գտնէինք ճշգրիտ կերպով որոշւած մի ընդհարումի դիմաց, եթէ մենք ունենայինք կարողաբերութիւն միմիայն Գրանէի, Լօրանօվի, Տուրքիի եւնի գործերը։ — Այդպէս չէ, սակայն։ Տարիներից ի վեր սուլթանը, չնորհւ Եւրոպայի թուլութեան, կարողացել է ծաղրել դաշնագրերը, խախտել բացարձակապէս բոլոր մարդկային օրէնքները։ Նա ինքզինքը դուրս է ձգել օրէնքից։ Գողութիւնը, կաշառակերութիւնը, թաւանք եւ սպանութիւնը նրա կառավարելու միջոցներն են։

Ամէն ոք գիտէ՞ այդ, ամէն մէկը խոստովանում է այդ եւ սակայն այդ ոճիրները շարունակում են դեռ. . . Հրդեհը այրում է Եւրոպայի աչքերի՝ առջիւ եւ հարկը հազարաւոր զոհերը հեծկրում են նրա ականջների տակ։

Կառավարութիւնները քաղաքագիտական էին կարծել կոյր ու խուլ ձեւանալ. բայց հարստահարածների գանգանոր նրանց պոլիների վրայից անցնելով՝ ժողովուրդների սրտի մէջ մտաւ Այն ժամանակ առաջ եկաւ մէկ սխալում եւ ֆրանսիական պարլամենտին է պատկանում նրա ազդանշանը տալու պատիւը *):

Երբ արտաքին գործերի մինիստրը փորձեց ներկայացնել Գրանէի, Լօրանօվի եւ Տուրքիի գործերի դրու-թիւնը՝ ամէն կողմից տաղաւորի, անհամբեր նեղութեան նշաններ էին երևում եւ երբ նա վերջացրեց՝ մէկ ձայն միայն կար բոլոր նոտարանների վրայ, մէկ ձայն, որ ուղում էր ազգարարել միմիտորական ճառի պակասը այս բաներով. «Իսկ Հայաստանը»։

Երկար ժամանակ թմրած՝ ֆրանսիական գիտակցութիւնը լսելի դարձրեց ինքն իրեն, եւ Եւրոպական գիտակցութիւնը չի յապաղի մի անգամ եւս արձագանք տալու նրան։ Սուլթանը, ուրեմն դատապարտւած է՝ նորից մեղադրելի իր դիրքը բռնելու։ Նա զգում է, որ Եւրոպայի ձեռքը նորից վրայ է հասնում՝ կանգնեցնելու նրան։ Այս է արդեօք վայրկեանը, որից կուզենան օգտուել խաղաղասէրները քաջալերելու նրան, բայց անելու նրա առջիւ ԼաՏէի Ատեանի սուրբ ապաստանը։

Ո՛չ, հազար անգամ ոչ։ Դա կը լինէր արգարութեան կատակերգութիւն, դա կը նշանակէր՝ ծածկել անիրաւութիւնը եւ կոտորածը. . . Իրաւարար դատաստանը կը դառնար ոչ թէ մի միջոց թողնելի՝ ընդդէմ հօգուների, զոհերի՝ ընդդէմ դահիճների, այլ կը լինէր ապաւէն միմիայն բռնակալների ու մարդասպանների համար։

Ոչ, սուլթանը միայն մի բան ունի անելու. այն է՝ վերջացնել իր հաշիւները, բայց իր բոլոր հաշիւները Մէկ բան միայն պէտք է անել. այն է՝ կանգնեցնել նրան ոչ թէ միայն իր գողութիւնների, այլ եւ իր սպանութիւնների, իր դարչելի ոճիրների ճանապարհին։

Այդ վեհապետը, որին անդիմական եւ ֆրանսիական պարլամենտներում բարձրաձայն որակեցին՝ մարդասպան լառով, առանց որ մի նախագահ կամ մի մինիստր համարձակէր բողոքել, այդ վեհապետը քաղաքակիրթ աշխարհի հրապարակական թշնամին է։ Նա կարողացել է մինչեւ օրս օգտուել Եւրոպական երկպառակութիւնից, բայց այժմ չափն անցած է եւ քանի որ դէպքերը ստիպելին մեզ միջամտել, թող Ֆրանսիան քարշէ իր ետեւից զղջացող Եւրոպային եւ թող բոլոր պետութիւնները գումարւին այսօր, ինչպէս 23 տարի սրանից առաջ Բերլինում, եւ մի անգամ եւս համերաշխ ընթանան շարունակելու համար իրենց հսկողութիւնը եւ հարկ եղած դէպքում իրենց ճնշումը։

Սրանք են պատճառները, որոնց հիման վրայ եւս չեմ ընդունի սուլթանին իրաւարար Ատեանի առջեւ։ Աւելացնում եմ, որ հանգամանքները թուում են ինձ բացառիկ կերպով նպաստաւոր որպէս զի պետութիւնները օգտուելով մեր նախաձեռնութիւնից, ստանան նրանից այն գոհացումներն ու երաշխաւորութիւնները, որ պահանջում են ոչ թէ միայն մի քանի պահանջատէրներ, այլ բովանդակ մարդկութիւնը։

Frankfurter Zeitung-ին հետագրում են նոյեմբերի 7-ին, որ համայն Աւստրիայի սօցիալ-դեմոկրատական կոնգրէսը (ուր ներկայ էին Գերմանիայից՝ Բէթել, Կառլսհէի եւ Բերնշտայն) իր մի նիստում համակրութեան ցոյց արաւ հայերին։

*) Յօդաւագիրը ակնարկում է նոյեմբերի 4-ին հայկական խնդրի մասին եղած հարցաանդումի վրայ։

* * *

«Դրօշակի» խմբագրութիւնը առանձին նամակներով դիմեց իտալական պարլամենտի անդամ՝ Էնրիկօ Ֆէրրիին և գերմանական Ռայխստագի անդամներ՝ Բէքէլին և Ռիխտերին, խնդրելով նրանց հարցապնդում անել մեր խնդրի առթիւ պատգամաւորական ժողովներում:

ՖՐԱՆՍԱՅԻ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՑՈՐԱՅՆԵՐԸ

Իբրեւ արձագանք Բրիտանիայի Միջազգային Սոցիալիստական Բիւրօյի կողմէն՝ Ֆրանսիական միացեալ սոցիալիստ կուսակցութիւնը հրապարակ նետեց իր կողմից մի մանիֆէստ՝ ուղղւած Ֆրանսիայի աշխատանքի դասակարգին: Ահաւասիկ այդ մանիֆէստն իր ամբողջութեամբ:

Աշխատաւորներ, սոցիալիստներ,

Ամիսներից իվեր ամենայուզեղ լուրեր են գալիս մեզ Հայաստանից: Բազմաթիւ գիւղերում, բազմաթիւ նշանաւոր կենտրոններում՝ Եգերէկ, Խնուս, Մուշ, Սասուն և երկրի շատ ուրիշ կէտերում տեղի են ունեցել առանձնապէս նշանաւոր ջարդեր և զանազան նշաններից երևում է, որ կարծէք մօտ ապագայում պիտի իրագործւին չարաշուք ծրագիրներ: Այդ նշաններից մէկն է զօրանոցների կառուցումը Հայաշատ վայրերում և զինւորական ուժերի անսովոր ծաւալումը: Աերջապէս պէտք է ասել, որ — նոյնիսկ մի կողմը թողնելով նոր կատարւած ամենասարսափելի անցքերը և բնաջնջման այն հաւաքական ու անսպասելի միջոցները, որոնք սպառնում են ապագայում և Փոքր-Ասիայի հայ ազգաբնակչութեան դրութիւնը վերջին ծայր արժանի է՝ իր վրայ պահելու քաղաքակրթւած աշխարհի և մասնաւորապէս սոցիալիստների ուշադրութիւնը:

Սկսած 1894-ի, 95-ի և 96-ի մեծ հեկատոմքներից, սկսած այն ժամանակից, երբ երեք տարւայ միջոցում երեք հարիւր հազար հայ, այր, կին, ծեր ու երեխայ ընկան Արդիւ Համդի ծառաների հարւածների տակ, — թիւրքական Հայաստանը, չնայած սուլթանի խոստումներին ու ստանձնած պարտաւորութիւններին՝ անգափար եղել է թատերաբեմ՝ ամէն տեսակ թշտութեան, ամէն տեսակ վայրենութիւնների, ամենաանսիրտ և ամենաբարձր եղեռնափորձերի:

Հայերի դէմ ամէն բան թողատուած է. ամենայնցաւոր գործողութիւնները դառնում են օրինաւոր, նրանք բացարձակապէս կամ լռելիայն խրախուսւում են Երլըզ Բիօսկի Մարդուց: Քրդերը, համդիէները — սուլթանի այդ ժամանակակից ներհեքները՝ աւելի անողորմ և աւելի բարբարոս քան նախկինները՝ իշխում են տիրականօրէն հայերի կայքի և անձի վրայ: Նրանք զոհում են հայերին իրենց հողերից — եթէ նրանց հաճելի է այդ — և ապա ստիպում են նրանց իբրեւ ստուկների, մշակել այդ հողերը, որոնց տէրերն էին նրանք քիչ առաջ: Նրանք յափշտակում են հայերի հօտերը, տանում են նրանց հունձը, գողանում են նրանց մօտ եղած չեղած դրամը: Առանց պատրւակի, սոսկ քմահաճոյքով նրանք պաշարում են ունեւ գիւղ թալանում են այն, գերի են առնում պատաւոր բնակիչներին, որոնց յետոյ սպանում են կամ բանտ են նետում: Բռնաբարոյում են

կանանց և ջահել աղջիկներին: Երբեմն ահաւոր սպանաւորներով նրանք աղողում են խաւմացնել բնակիչների մի մասը և այդպիսով պսակում են ամօթի և բնաջնջման իրենց գործը առաքելութեան մի գարշելի լուսապսակով:

Հարց կրտսն՝ ինչպէ՞ս է պատահում արդեօք, որ մի ժողովուրդ թոյլ է տալիս այդպէս խողխողել իրեն և չի փորձում ընդվզում մի ահագին շարժումով գետին փռել հարստահարչին: Բայց, ինչպէս որ ասւած է նորերս Գլասկօյի խաղաղութեան կոնգրէսին ներկայացւած մի յիշատակագրում, «Բռնութիւնների և մարդասպանութիւնների դէմ» պաշտպանելու համար հայերը ոչ մի միջոց չունին, քանի որ նրանց արգելւած է ունեւ զէնք կրել: Դանակներն անգամ խլում են նրանցից, մինչդեռ բոլոր քրդերն ու թիւրքերը լաւ զինւած են, դարերից իվեր նրանց արգելւած է մինչև իսկ դագանակներ ունենալ: Հայերը մի անպաշտպան որս են քրդերի ու թիւրքերի համար և այդ որսը նրանք բռնում են, չարչարում, պատառոտում են, նրանց տանջանքներից մի սոսկալի հրճանք են ստեղծում նրանք իրենց համար:

Կողոպուտներ, սպանութիւններ, բռնաբարութիւններ — այդ ոճիրները կատարւում են ամէն օր և նրանց լուրը հասնում է Եւրօպա և պետութիւնների դիւանատները տեղեկանում են նրանց մասին իրենց հիւպատոսների պաշտօնական զեկուցումներով, ինչպէս նաև դժբախտ հայերի յաճախակի գանգատներով և թախանձագին կոչերով:

Եւրօպական պետութիւնները իրազեկ են, բայց մնում են լուռ, անկարեկիր և իրենց այդ անտարբերութեամբ ու լուութեամբ նրանք ծածկում են սուլթանի հրամանով գործւած ոճիրները:

Ինչո՞ւ մնում են նրանք լուռ ու անկարեկիր: Չեն կարող արդեօք միջամտել վախճան դնելու բոլոր իրաւունքների այդ բռնաբարութիւն, այդ անդադրում ու յանդուգն մարտակոչին, որ ուղղւած է ընդդէմ մարդկութեան: Դատապարտւած են նրանք արդեօք անդրդելի մի ճակատագրով՝ անգոր և անշարժ հանդիսատես մնալու այդքան զազրելի ոճիրների:

Ոչ, մի յատուկ դաշնագիր, Բերլինի դաշնագիրը, ստորագրւած թիւրքիայից, միաժամանակ և Գերմանիայից, Անգլիայից, Իտալիայից ու Ֆրանսիայից՝ սահմանել է հայերի դրութիւնը, հրատարակել է անհրաժեշտ սեպւած բարենորոգումներ և լիազօրութիւն է տւել այդ աղաքան ազգութիւններին՝ միջամտելու և հովանաւորելու հայերին: Այդ դաշնագրի 61-րդ յօդւածի համաձայն՝ «Բ. Դուռը պարտաւորւում է անյապաղ իրագործել այն բարելաւումներն ու բարենորոգումները, որ պահանջւում են հայաբնակ գաւառների տեղական պէտքերից և ապահովել նրանց չէրքէզների ու քրդերի դէմ: Նա պարբերաբար կը զեկուցանէ այդ խնդրի համար ձեռնարկւած միջոցները պետութիւններին, որոնք կը հսկեն նրանց գործադրութեան վրայ»:

Բերլինի դաշնագրի այդ յօդւածը մնաց մեռած տառ, մասամբ սուլթանի, մասամբ էլ Եւրօպայի յանցանքով: Նախատեսւած միջոցներին սուլթանը չի ձեռնարկել իսկ պետութիւնները, որոնք պիտի հսկէին նրանց գործադրութեան վրայ միանգամայն աչքաթող են արել նրանց: Այն գարշելի սպանութիւնները, որոնք 1894-ից

մինչև 1897 անապատ դարձրին Հայաստանը՝ տեղի չէին ունենալ առանց այդ յանցաւոր անտարբերութեան:

1895-ին, Սասունի ջարդերի հետեւեալ օրը եւրօպական կառավարութիւնները մի վայրկեան գիտակցեցին իրենց վրայ ծանրացող պատասխանատուութիւնները և յիշեցին Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը: Նրա պարունակութիւնը սուլթանին յիշեցնելու համար՝ նրանք ընդհանուր համաձայնութեամբ մշակեցին մի յիշատակագիր, որ և լրացրին բարենորոգումների մի ծրագրով: Սուլթանը հաստատեց թէ մէկը և թէ միւսը: Դրանով նա երկրորդ անգամ ճանաչում էր իր պարտականութիւնը տալու հայերին միևնոյն իրաւունքները, ինչ որ միւս հպատակներին, իր պարտականութիւնը՝ պաշտպանելու նրանց ամէն տեսակ յարձակումների դէմ և պետութիւնների իրաւունքը՝ հսկելու, որ կիրառուի հայ հպատակների համար ընդհանուր օրէնքը:

Այդ մեծօրանդումի յօդուածների մէջ յիշատակենք հետեւեալը. «7⁰ նշանակել բարձրագոյն վերահսկող կոմիսար՝ ընթացիկները գործադրելու գաւառներում. 8⁰ կազմել մի միայն ընդհանուր յանձնաժողով և. Պոլսում»:

Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի պէս 1895-ի մեծօրանդումը ևս մնաց ապարդիւ: Ոչ Թիւրքիան, ոչ էլ պետութիւնները ամենափոքր ուղղորդութիւն անգամ չդարձրին նրա վրայ: Այսօրեայ մեր պահանջն է՝ որ նրանք յիշեն այդ դաշնագրի զոյուութիւնը և ըստ այնմ գործեն, մեր պահանջն է՝ որ ֆրանսիական կառավարութիւնը գիտակցէ իր պարտքը և իր իրաւունքը գործադրէ, որ նա դուրս գայ իր անտարբերութիւնից և անէ այն ժեստը, որը կարող է փրկել հարիւր հազարաւոր մարդկային կեանքեր և գուցէ ազատել մի ամբողջ ցեղ բնաջնջումից:

Ներկայ ժամին միջամտութեան այդ պարտականութիւնը աւելի զօրեղ է, քան երբ և իցէ, ոչ թէ միայն այն պատճառով, որ բացառիկ ծանրակշիռ անցքեր թուում են անխուսափելի, այլ նաև որովհետև ուրիշ կարգի գործեր—իսկապէս ամենացած կարգի—առաջ են բերել կէս-խզում՝ նրա և Բ. Դրան յարաբերութիւնների և յարուցել են երկուսի միջև դիւանագիտական մէկ խօսակցութիւն, որի նիւթը շատ դիւրին կը լինէր ընդարձակել և որի աստիճանը դիւրին կը լինէր բարձրացնել: Մեր կառավարութիւնը, որ տարիների ընթացքում անզգայ է գտնւել այնքան գաղանդութիւնների տեսարանի հանդէպ՝ յուզեց երբ տեսաւ, որ օսմանեան կառավարութիւնը յապաղում է կարգադրել դրամական խնդիրը, որ շահագրգռում է ֆինանսական մի ընկերութեան և մի քանի բանկիրների, և նա յուզեց այն աստիճան, որ պատուակ տւեց իր դեսպանին՝ Ֆրանսիա վերադառնալու և միաժամանակ հրահանգեց Պարիզի Թիւրքաց դեսպանին՝ թողնել իր պաշտօնը:

Արդ, այս րոպէիս, երբ ֆրանսիական հանրապետութեան կառավարութիւնը՝ դառնալով եռանդուն սպասաւոր մի քանի կապիտալիստների շահերի՝ ընդհարումի մէջ է մտել Նըլդըզ Բիւսկի կառավարութեան հետ—մենք պէտք է յիշեցնենք նրան, որ շատ ժամանակից իվեր բողոքովին տարբեր պատճառներ—մարդկայնութեան պատճառներ, ինչպէս նաև վստահութեան այն զգացմունքը, որ հայ ժողովուրդը տածել է դէպի նա—պիտի առաջ բերէին նրա կողմի միջամտութիւնը այդ (Թիւրքաց) կառավարութեան գործերում, մենք պէտք է

յիշեցնենք նրան (ֆրանս. կառավարութեան), որ նա չի կարող—առանց ինքզինքը ծածկելու անջնջելի ամօթով—աւելի ևս յապաղել՝ պահանջելու, որ ի գործ դրւին Բերլինի դաշնագրի և 1895-ի մեծօրանդումի յօդուածները:

Համաձայն 1900-ի սօցիալիստական միջազգային կոնգրէսի մէկ վճռին՝ միջազգային սօցիալիստական բիւրօն այս օրերս հրաւէր ուղղեց բոլոր երկրների սօցիալիստ կուսակցութիւններին, որ նրանք ազգեն իրենց պարլամենտների և կառավարութիւնների վրայ, որպէս զի պետութիւնները վերջ գնեն Հայաստանի կոտորածներին: Տասնուհինգ օրից յետոյ պատգամաւորական ժողովի բեմից սօցիալիստ հռետորները լսեցնել կը տան մեր կուսակցութեան բողոքը և կը պահանջեն մեր կառավարութիւնից կատարել իր պարտքը: Չենք կասկածում, որ ուրիշ պարլամենտներում ևս մեր արտասահմանեան բարեկամները բեմ կը հանեն միևնոյն խնդիրը և կը գործեն միևնոյն ոգով: Ուրիշ երկրներում սօցիալիստները համաձայն միջազգային բիւրօյի ցանկութեան՝ մամուլի, հրապարակական ժողովների միջոցով կը լուսաւորեն հանրային կարծիքը և կը շարժեն մասսաները:

Պէտք է, որ մեր երկրում ամբողջ սօցիալիստ կուսակցութիւնը ոտքի կանգնէ և լսեցնէ իր ձայնը: Պէտք է, որ մեր սահմանների այս և այն կողմը սօցիալիստ ընտրեալների գործունէութիւնը երկրորդի բոլոր սօցիալիստների գործունէութեամբ, մամուլի և ժողովների մի մեծ շարժումով:

Աշխատաւորներ, սօցիալիստներ, ջանացէք, որ 1900-ի միջազգային կոնգրէսի խօսքը վերածուի գործի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Թ Ե Ր Թ Օ Ն

Կ Ե Ա Ն Գ Ի Դ Ի Մ Ա Յ

Դաժան կեանքի դիմաց կանգնած էին երկու մարդ, երկուսն էլ դժգոհ նրանից և կեանքի հարցումին՝ «Ի՞նչ էք ինձնից սպասում?»—նրանցից մէկը նաղած ձայնով ասաց. — «Բո հակասութիւնների խստութիւնից եմ զայրացած ես. իզուր իմ բանականութիւնը ձգտում է ըմբռնել գոյութեան խորհուրդը և քո հանդէպ հոգիս լի է վարանումի խաւարով: Իմ ինքնագիտակցութիւնը ասում է ինձ, որ մարդս լաւագոյնն է բոլոր էակներից. . .

— Ի՞նչ ես ուզում ինձնից, հարցրեց կեանքն անտարբեր:

— Երջանկութիւն. . . Իմ երջանկութեան համար անհրաժեշտ է, որ դու հաշտեցնէիր իմ հոգու հակասութիւնների երկու հիմունքները՝ իմ «ուզում եմ»-ը քո «պարտաւոր ես»-ի հետ:

— Ուզիր այն, ինչ որ պարտաւոր ես ինձ համար, խստութեամբ պատասխանեց կեանքը:

— Ես չեմ ցանկանում լինել քո զոհը, բացականչեց մարդը. ես կեանքի տէրն եմ ուզում լինել, այն ինչ պարտաւոր եմ ձկնել վիզս նրա օրէնքների լծի տակ— ինչո՞ւ համար. . .

— Խօսեցէք աւելի պարզ կերպով, ասաց միւս մարդը, որը աւելի մօտ էր կանգնած կեանքին. իսկ առաջինը շարունակում էր, ուշք չդարձնելով ընկերոջ խօսքերին:

— Ես ազատութիւն եմ ուզում—ապրել ներդաշնակ

իմ ցանկութիւններէ հետ, և ես չեմ ուզում լինել պարտականութեան զգացումով ոչ եղբայր, ոչ ծառայ մերձաւորի համար. ես կը լինեմ այն, ինչ որ ազատօրէն կ'ուզենամ — ստրուկ կամ եղբայր: Ես չեմ ուզում մի քար լինել հասարակութեան մէջ, որ այդ հասարակութիւնը դնում է ուր և ինչպէս կամենում է, չինելով իր բարօրութեան բանաբը: Ես մարդ եմ, ես կեանքի ոգին ու բանականութիւնն եմ, ես պէտք է լինեմ ազատ:

— Սպասիր, ասաց կեանքը, դաժանօրէն խնդալով. — դու շատ խօսեցիր, և ինչ որ յետոյ պիտի ասես, ինչ յայտնի է. դու ուզում ես ազատ լինել լաւ, եղբր. կուր ինչ հետ, յաղթիր ինչ և եղիր իմ տէրը, ես այն ժամանակ կը լինեմ քո ստրուկը: Դու գիտես, ես անտարբեր եմ և միշտ դիւրութեամբ անձնատուր եմ լինում յաղթողներին: Բայց պէտք է յաղթել: Ընդունակ ես արդեօք կուր ինչ հետ՝ քո ազատութեան համար: Բաւականաչափ ուժ ունիս քո մէջ յաղթողութեան համար և հաւատում ես արդեօք քո ուժին:

Եւ մարդը տրտում պատասխանեց. «Դու մղեցիր ինչ դէպիներքին կուր, դու դանակի պէս սրեցիր իմ բանականութիւնը, նա միւսեց հոգուս խորքը և շախմատս նրան»:

— Է՛հ, դուք աւելի խիստ խօսեցէք նրա հետ, մի՛ գանգատէք, ասաց միւսը:

Իսկ առաջինը շարունակում էր. «Ես հանգստանալ եմ ուզում քո ճնշումից: Օ՛, թող տուր ինչ ճաշակել երջանկութիւնը»:

Դարձեալ ժպտաց կեանքը, — մի ժպիտ, որ սառցեցի փայլի էր նման:

— Ասա՛ ինչ, երբ դու խօսում ես, պահանջում ես արդեօք թէ խնդրում:

— Խնդրում եմ, արձագանքի պէս պատասխանեց մարդը:

— Դու խնդրում ես սովորական մուրացկանի պէս, բայց, ինքզ՝ մարդ, ես քեզ պիտի ասեմ, որ կեանքը ողորմութիւն չի տալիս: Եւ գիտես՞ որ, ազատ մարդը չի խնդրում, այլ նա ինքն է վերցնում իմ պարգևները... Իսկ դու, դու միայն քո ցանկութիւնների ստրուկն ես և ուրիշ ոչինչ: Նա է միայն ազատ, որը ուժ ունի հրափարելու իր բոլոր ցանկութիւններից, որպէս զի ամբողջ միմիայն մէկի մէջ, Հասկացար: Հեռացիր:

Նա հասկացաւ և շան պէս պառկեց անտարբեր կեանքի ոտքերի տակ, որպէս զի կամացա՛հա բռնէ նրա վերջանից նետած փշոտքները:

Այն ժամանակ անողորմ կեանքի գոգոյն աչքերը դարձան դէպի միւս մարդը, որը մի անտաշ, բայց բարի դէմք էր:

— Դու ինչ ես խնդրում:

— Ես չեմ խնդրում, պահանջում եմ:

— Ի՞նչ:

— Ո՞րտեղ է արդարութիւնը, տուր ինչ նրան: Բոլոր մնացածը ես ինքս կ'ունեմ, առայժմ ինչ պէտք է միմիայն արդարութիւն. ես երկար սպասեցի, ես համբերութեամբ սպասեցի, ես ապրեցի աշխատանքի մէջ, առանց հանգստի ու լոյսի. ես սպասեցի... բայց բաւական է: Ժամանակ է ինչ ապրել. ո՛ւր է արդարութիւնը:

Եւ կեանքն անտարբեր պատասխանեց նրան.

— «Վերցրո՛ւ»:

ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿԻՑ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ՆԱԽԱՅԱՆՔՍԻ ԿԵԳՐ. ԿՈՄԻՏԷՆ ՍՈՒՅՈՒՆԷՆ

ԱՊՐԱՅՈՒՆԻ «Դարձի» խմբից՝ Զար պողպատից՝ Ստամբուլի, Մ. 5-ական ուղի, Ա. 2., 2. Ն. 3-ական, Թ. Ա. 2, Ա. Ն. 2 n. 50 կողմ, Դ. 10. 1 n. 50 կ., Ա. Թ. 1 n. 50 կ., Դ. Ա. Ս. Ա., Գ. Ն., 3. Դ. մէկէն-ական n., 10. Ա., Ս. 2., 4. Դ., Ա. Ե. Թ. 0., 8. Դ., Ս. Ա., Մ. Ա. 50-ական կ., Դ. 0. 40 կ., Դ. Ա. 20 կ., Ժմակից՝ 10. Ե. 5 n., 3. Դ. 3 n. 3. Մ. 2, Ս. Դ., Գ. Մ., 10. Ե., Գ. Մ., 3. Թ. մէկէն-ական n., Գ. 8. 75 կ., 8. Դ. 65 կ., Թ. Ե. 27 կ., Ս. Գ. 25 կ., Մ. 10. 25 կ., «Բաբկէն Սիւնի» խմբ. 11 n. 35 կ., «Էփէն փողարից» Մ. 3. 1 n., Ե. Թ. 50 կողմ: ԳԱԶԱՆԱՅՈՐԻ մասնաժողովից՝ օրհորդաց «Բաբկէն Սիւնի» խմբի կատարած վիճակահանացից 304 n., Նէր-նեցից՝ Ալէք 10 n., Սեդրակ 1 n., Սամսոյ ծննդի ծնողի հանգանակած՝ ԺԱՅՈՒ ԳԵՂԻՍՅԱՆԻՍՅԱՆԻ խմբից 10 n., Սոյն ԳԵՂԻՍՅԱՆԻՍՅԱՆԻ խմբից 10 n., ԺՈՒԱԳԻՆԻՆԻ «Ասլան» խմբից 30 n., Յարութիւն-Վասիլապուհից 1 n., Շահաբաժին 45 n., ԱՊՐԱՅՈՒՆԻՑ՝ Մոմակ 25 n., Զաւէն 6 n., ԴԱՇՏԻՑ՝ Անտիս վարպետ 5 n., ՆՈՐ ԲԵՐԴԻՑ 116 n., 1900 թ. ԱՊՐԱՅՈՒՆԻ «Ոչտունեաց» խմբից 45 n.: Դուար 693 ուղի 12 կողմ:

ՎՐԻՊԱԿ. 1901 թ. № 5 «Իրօշակի» մէջ, ԳԱԶԱՆԱՅՈՐԻ ԶԱՓՈՒՂ ԳԵՂԻՍՅԱՆԻ ՆԵՐԱՏՈՒԹԻՒՆԻՆ «Իրօշակի» այս տարւայ N° 3-ի մէջ հրատարակած լինելով, չեղեալ նկատու:

№ 7 «Իրօշակի» մէջ խմբած է՝ «Կարէզ» խմբից 50 n., պէտք է լինի «Կարէզ» խմբ. 20 n. եւ «Արշակ» խմբ. 30 n.:

ԲՈՒԿԱՐԻՍ

ԱՆՈՒՆԻ «Հովիտ» օժանդակ կոմիտէն 1900 հոկտեմբերից 1901 սեպտեմբեր շրջանում շահաւորութեան համար Նէր Մանկունից 20 էլէ, Նէր զանազան անձնից 11 էլէ 50 սթ, «Տարոնացի» խմբի անդամավճարներից (1900 հոկտեմբերից մինչև յուլիսի վերջ) 40 էլէ, «Արարատեան» խմբի անդամավճարներից 20 էլէ 15 սթ, Սթրաւայի «Սեդր-Արիւս» խմբ. 69 էլէ, Զիր-բանի պոլիկար համակրողից 6 էլէ, Սթրաւ-Զակորայի հայ զառ-թակաւորներից 14 էլէ 10 սթ: Դուար 180 էլէ 75 ստոտ:

Ա Զ Դ

«Իրօշակի» խմբագրութիւնը, անկանոնութիւններէ խուսափելու համար, իր մասնաւոր ընթերցողներուն, զգած էր յայտարարութիւններ որոշ հասցէներ պահանջելով անոնցմէ: Մինչև մէկ յունուար 1901 անպատասխանի մնացած յայտարարութիւններու հասցէներուն թերթ պիտի չ'ուղարկուի այլևս:

Հ. Յ. Դ. «Զանգ» կոմիտէն լոյս է ընծայել բաց նամակների մի ներիա նշանաւոր յեղափոխականների պատկերներով (Աղբիւր-Սերոբ, Արաբ, Աշոտ-Թաթուր, Բաբկէն-Սիւնի, Գուրգէն, Եգիպտացի, Կարօ, Միսակեան, Պիտո, Վաղգէն): Ղաճառում են նախնականերով: Իւրաքանչիւր տասնեակի գինն է մէկ ֆրանք:

Դիմել՝ M. Gaspari, Roseaie, 68, Genève.

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ՂԱՐԻԲ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐԶԻՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅ ՅԵՂՎՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՐԻ II

(ԱՅՏԱՏՄԱՑ «ԴՐՕՇԱԿ»-ԻՑ)

Գինն է 60 սանտիմ, ճանապարհածախսով 70 սանտիմ: Դիմել՝

Rédaction du «Droschak», Genève (Suisse)